

«ՏԱՇԻՐ ԱԳՐՈ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Բլագոդարնոյե համայնքի անասնազոմ №6-ի և
կթարան №2-ի կառուցման աշխատանքների
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն

Գլխավոր տնօրենի ժ/պ`



Հերմինե Ղազարյան

Երևան – 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ _____	3
1.1 Տեղեկություններ ձեռնարկողի մասին _____	3
1.2 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը _____	4
1.3 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը _____	6
1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) _____	14
1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիրը.....	14
1.4.2 Կառուցապատման տարածքի տեղադիրքը և իրավիճակային հատակագծերը.....	17
1.4.3 Հողային աշխատանքներ. շինտեխնիկա	17
1.4.4 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....	18
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ _____	19
2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները _____	19
2.2 Սեյսմիկա և երկրաբանություն _____	20
Քաղաքների մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակ _____	28
2.3 Համայնքի կլիմայական պայմանները _____	30
2.4 Հողային ռեսուրսներ _____	41
2.5 Ջրային ռեսուրսներ _____	42
2.6 Բուսական և կենդանական աշխարհ _____	42
2.7 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը _____	56
2.8 Պատմամշակութային և բնության հուշարձանները _____	62
2.9 Հատուկ պահպանվող տարածքներ _____	Error! Bookmark not defined.
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ և ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ _____	62
3.1 Ռիսկերի գնահատում _____	67
3.2 Արտանետումների աղբյուրները _____	75
3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն _____	76
3.3.1 Մթնոլորտային օդ.....	76
3.3.2 Ջրային ռեսուրսներ.....	76
3.3.3 Հողային ռեսուրսներ	76
3.3.4 Թափոնների կառավարում.....	78
3.3.5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը	79
3.3.6 Հակահրդեհային միջոցառումներ	80
3.3.7 Աղմուկ.....	82

3.3.8 Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր..... 84

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ _____ 88
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
90
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ _____ 95
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____ 97
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ _____

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Տեղեկություններ ձեռնարկողի մասին

Նախատեսվող գործունեություն	ՀՀ, Լոռու մարզ, Բլազդդարնոյե համայնքի անասնազոմ №6-ի և կթարան №2-ի կառուցում
----------------------------	--

Նպատակը	ՀՀ, Լոռու մարզի Բլագոդարնոյե համայնքի անասնազոմ №6-ի և կթարան №2-ի կառուցման աշխատանքներ
Ձեռնարկող	«Տաշիր Ագրո» ՓԲԸ
Ձեռնարկողի հասցե	ՀՀ ք. Երևան, Խորենացի 33
ՇՄԱԳ աշխատանքների համակարգող	Տիկին Կ. Մովսիսյան
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	ՀՀ, Լոռու մարզ, Տաշիր համայնքի, Բլագոդարնոյե բնակավայր
հողամասի մակերեսը	1.648487 հա և 8,8239 հա

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, բնության, շրջակա միջավայրի և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ գնահատումը: Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը պետք է ներառի շրջակա միջավայրի բաղադրիչների /հող, ջուր, օդ, կենսաբազմազանություն/ վրա ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ընկերության կողմից սույն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակման համար հիմք է հանդիսացել Վոլիոս» ՓԲԸ-ի և «Տաշիր Ագրո» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագիրը և համայնքի կողմից տրամադրված 18 նոյեմբերի 2022թ ճարտարապետահատակագծային առաջադրանքը N43, այն կառուցվելու է սեփական գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողատարածքում /սեփականության վկայականները Հավելվածում/:

Ներկայացված նախագիծը կատարված է ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Բլագոդարնոյե բնակավայրի վարչական **1.648487** հա և **8,8239** հա մակերես ունեցող տարածքում՝ համաձայն պատվիրատուի առաջադրանքի և ՀՀ-ում գործող շինարարական նորմերի:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով կազմվել է նախատեսվող

գործունեության սույն ՇՄԱԳ հաշվետվությունը, որում ամփոփվել են գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատման և վերլուծության արդյունքները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,

- Շինարարության փուլում մերձակա բնակչությանը /հարևանությամբ առկա բնակել և հասարակական օբյեկտներ/ պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,

- Հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում առաջացող արտահոսքերով,

- Հողերի աղտոտում՝ շինարարության և շահագործման ընթացքում առաջացող թափոններով, շինարարական և կենցաղային աղբով,

- Աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս բաղադրիչների վրա կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակում,

- Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ առաջին հանրային լսումների իրականացում՝ տեղական ինքնակառավարման մրմինների կողմից նախնական համաձայնության տրամադրման փուլի, հանրային քննարկումների անցկացում և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ նկարներ կամ տեսաձայնագրություն, ինչպես նաև համայնքի ավագանու նախնական համաձայնության որոշում) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

Հաշվետվությունը ներառում է տվյալներ, հիմնավորումներ և հաշվարկներ,

որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրականացման համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող էկոլոգիական ազդեցությունը (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել և գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և կամ նվազեցմանը ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը պատրաստվել է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն որոնք բերված են ստորև:

1.3 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Նախատեսվող գործունեության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»

ՀՀ օրենք (2023թ.) – Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2023թ.-ի Հայաստանի Հանրապետության օրենքի (03.05.23թ.ՀՕ-150-Ն) /Այսուհետ՝ Օրենք/:

Վերը նշված Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված գործունեության տեսակներ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված գործունեություն, իսկ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով նախատեսված դեպքերում՝ նաև դրանց վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում, ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների դեպքում՝ շահագործումից հանում (ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտ հանդիսացող գերեզմանոցի դեպքում՝ փակում) կամ քանդում կամ նախագծային փոփոխություն. սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները:

Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ «Ա», «Բ» կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են ելնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից:

Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են՝ հիմք ընդունելով նախատեսվող գործունեության տեսակը, չափերն ու տեղադրությունը և դրանցով պայմանավորված՝ հնարավոր գումարային, ամբողջական ազդեցության աստիճանը:

Հիմք ընդունելով ներկայիս Օրենքի հոդված 37-ից «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բխող ենթաօրենսդրական ակտերի ուժի մեջ մտնելու ժամկետները, փորձաքննական գործընթացը նախատեսվում է իրականացնել համաձայն սույն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից ելնելով՝ «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին չավարտված փորձաքննության գործընթացի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են փորձաքննության գործընթացն սկսվելու պահին գործող իրավական ակտերով»: Այսինքն փորձաքննությունն իրականացվելու է առաջնորդվելով նոր Օրենքի 12-րդ հոդվածով թվարկված նախատեսվող գործունեության տեսակները՝ ըստ բնագավառների, ինչպես նաև դրանց համար նախատեսված՝ փոփոխված, պետական տուրքի չափը:

Նախատեսվող գործունեությունը համաձայն սույն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա) ենթակետի «քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով» «Բ» կատեգորիայի գործունեություն է և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական գործընթացն իրականացվում է 40 աշխատանքային օրվա ընթացքում՝ 1 փուլով, 2 հանրային քննարկումների իրականացմամբ: Փորձաքննության գործընթացների լիարժեքությունն ապահովելու համար լրացուցիչ աշխատանք կատարելու կամ այլ տեղեկատվություն ձեռք բերելու անհրաժեշտության դեպքում լիազոր մարմինը փորձաքննական գործընթացի ժամկետը կարող է երկարաձգել մինչև 30 աշխատանքային օրով, որի մասին ծանուցում է նախաձեռնողին՝ ծանուցման մեջ նշելով կատարվելիք լրացուցիչ աշխատանքի կամ ձեռք բերվող անհրաժեշտ տեղեկատվության մասին:

Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (11.1 0.1994թ., ՀՕ-121) – կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են “Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (29.05.2006 թիվ 750-Ն), “Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277-Ն), “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.1.2017 թիվ 1404-Ն) որոշումները:

“Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը” ընդունվել է է ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ. N 365-Ն հրամանով:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (24.11.2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին: ՀՀ Կառավարության նշված որոշման մեջ, վերնագրում, փոփոխություն է տեղի ունեցել 13.12.2007թ , 1451-Ն որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև 18.03.2011թ 238-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ կրկին վերնագրում փոփոխություն է տեղի ունեցել և վերաշարադրվել է «վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման» բառերով:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005)- կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը ՀՀ Կառավարության 2014թ. հուլիսի 31 N781, ՀՀ Կառավարության 2010թ. N71-Ն, 2010թ.

ՀՀ Կառավարության N72-Ն, ՀՀ Կառավարության 14.08.2008թ. N967-Ն և ՀՀ Կառավարության 08.02.2018թ. N108-Ն որոշումները:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է: Սահմանում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության պարտավորությունները, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակման կարգը, պետական ջրային կադաստրի և մոնիթորինգի, ջրային ռեսուրսների օգտագործման թույլտվություն տրամադրող համակարգերի ստեղծումը, անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործումը, ջրի որակի չափանիշները, հիդրոլոգիական կառուցվածքների շահագործման անվտանգության խնդիրները, ջրային ռեսուրսների պահպանությունը և պետական վերահսկողությունը: Ապահովում է հանրության համար համապատասխան տեղեկատվության մատչելիությունը:

«Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006) և «Հայաստանի հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին(21.12.2015թ.) ՀՀ օրենք-կարգավորում է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները, ընդգրկելով ազգային ջրային 7 պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները, ելնելով ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման համար հիմնական միջոցներից մեկը հանդիսանալու, դրա մատչելիության ապահովման նախապայմաններից:

«Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք (2005) - նպատակը մարդու բարեկեցության, հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման, տնտեսական և էկոլոգիական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ քանակի, ռեժիմի և որակի ջրային ռեսուրսների մատչելիության ապահովումն է: Սահմանում է ջրային ռեսուրսների կայուն կառավարման, օգտագործման և պահպանության գերակայությունները, ջրային ռեսուրսի հաշվառումը և գնահատումը, առաջարկի և պահանջարկի ձևավորումը, ջրավազանային կառավարման հետ կապված հարաբերությունները:

**“Հայաստանի Հանրապետության բնակչության
սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին”
ՀՀ օրենք /12.12.1992թ./**

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական,

տնտեսական եւ կազմակերպական հիմքերը, ինչպէս նաեւ պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար եւ վտանգավոր գործոնների ազդեցությունը եւ բարենպաստ պայմաններ ապահովում նրա և ապագա սերունդների կենսունակության համար:

***“Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին” ՀՀ օրենք
/04.03.1996թ./***

Սույն օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական եւ ֆինանսական հիմունքները:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք

Օրենքը ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին:

Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը: .

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

***Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք (23.11.1999
թ.)***

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են “Թափոնների մասին” ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

ՀՀ բնապահպանության նախարարը 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է

«Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

33 Անտառային օրենսգիրք 2005թ

ՀՀ կառավարության որոշումներ

- «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները - սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, անորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:
- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշումը-սահմանում

է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

- «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» 2007թ. մարտի 15-ի N385-Ն որոշում - Ներառում է Գեղարքունիքի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

- «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-Ն ՀՀ կառավարության որոշում – Սահմանում է ՀՀ բնության հուշարձանների ցանկը՝ համաձայն որոշման հավելվածի:

- «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014թ. N1059-Ա որոշում – Հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի, Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:

- «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության եվ օգտագործման բնագավառներում ռազմավարությանը եվ գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 10.12.2015թ. նիստի N54 ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

- ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»: Շրջակա միջավայրի նախարարի 2003թ. դեկտեմբերի 10-ի «Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկան հաստատելու համար» N 464-ն հրաման:

- ՀՀ կառավարության **02.12.2017** թվականի **N 1404** որոշումը,

- Շրջակա միջավայրի նախարարի 2020թ. սեպտեմբերի 9-ի «Ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջները սահմանելու մասին» N 335-Ն հրաման:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Հարկային օրենսգիրք» ՀՀ օրենքը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի հոկտեմբերի 13-ի ՀՀՇՆ 31-04.03-2023 «Շենքեր և սենքեր անասնաբուժական, թռչնաբուժական, գազանաբուժական. նախագծման նորմեր» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 10-Ն հրաման:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիրը

«Տաշիր Ագրո» ՓԲԸ նախատեսում է ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում իրականացնել հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Բլազոդարնոյե համայնքի անասնագոմ N°6-ի և կթարան N°2-ի կառուցման աշխատանքներ:

Տվյալ նախագիծը իր մեջ ներառում է Կթարան N° 2-ի և Անասնագոմ N°6-ի նախագծերը: Նախագծի կատարման համար հիմք են հանդիսացել «Վոլիոս» ՓԲԸ-ի և «Տաշիր Ագրո» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագիրը և համայնքի կողմից տրամադրված 18 նոյեմբերի 2022թ ճարտարապետահատակագծային առաջադրանքը N43, այն կառուցվելու է սեփական գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողատարածքում: Շինությունների առավելագույն բարձրությունը նախատեսվում է մինչև 7մ:

Համաձայն ներկայացված ինժեներա-երկրաբանական տվյալների ընդունված են հետևյալ կլիմայական և հատուկ պայմանները:

Մեյսմիկ գոտիավորում՝ 3 գոտի

Ձյան բեռնվածքը՝ 2-րդ գոտի, 70կգ/մք

Քամու ուժգնությունը՝ 3-րդ գոտի, 45կգ/մք

Բնահողի սառեցման խորությունը՝ 0.7մ

Հաշվարկային բեռնվածքները հետևյալն են՝

- Մշտական՝

Կոնստրուկցիաների սեփական քաշը տանիքային հարկի բեռնվածքը – 0.05տ/մք

- Կարճատև ժամանակավոր՝

Տանիքային հարկի բեռնվածքը – 0.1ը/մք:

Շենքի համար որպես հիմնատակ ընդունված են ավազակավային գրունտներ հետևյալ ֆիզիկա-մեխանիկական հատկանիշներով՝

Խտությունը՝ 1.9 գ/սմ³.

$R_0=0.15$ ՄՊա, ներքնակի գործակիցը 3000 ը/սմ³;

Գրունտի կարգը III ըստ սեյսմիկ հատկանիշի:

Շենքում ընդունված են հետևյալ կոնստրուկտիվ լուծումները՝

- Հիմքերը՝ միաձույլ ե/բ խաչահատվող ժապավենային և կետային, B20 դասի բետոնից, բազալտե խճի և կվարցային ավազի լցանյութով.
- Հիմնակմախքը՝ ե/բ միաձույլ տարաքական շրջանակներ B20 դասի ծանր բետոնից
- Ծածկի սալերը՝ միաձույլ B25 դասի ծանր բետոնից 150մմ հաստությամբ
- ե/բ կառուցվածքների ամրանավորման համար ընդունված է Ac-I և A500C դասի ամրաններ:

Տվյալ գործունեությունը նախատեսվում է իրականացնել իրար կից 1.648487 հա և 8,8239 հա մակերեսներով տարածքների վրա /հավելվածներ բաժնում կցվում են վկայականները/, որը գերազանցում է 1500քմ, ուստի նախատեսվող գործունեությունը համաձայն , Շրջակա միջավայրի վրա ազդեցության և գնահատման մասին **ՀՕ-150** օրենքի **12**-րդ հոդվածի **4**-րդ մասի, **8**-րդ կետի , **ա**ն ենթակետով սահմանված՝ Բ կատեգորիայի գործունեության տեսակ է:

Կառուցվելու է անասնագոմեր 6 հատ, համապատասխանաբար 1954քմ, 2027քմ, 1772քմ, 2992քմ, 1710քմ և 1656քմ մակերեսներով, 2 կլթարաններ՝ 452քմ և 435,87քմ

մակերեսներով, պահեստ՝ 1108քմ մակերեսով, 2 հատ սիլոսի հորեր՝ 645քմ և 637քմ մակերեսներով, գոմաղբի հավաքատեղի՝ 14000խմ տարողությամբ:

Անասունների գլխաքանակը նախատեսված է 288 խոշոր եղջերավոր կենդանիներ:

Ներկայացված նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի առաջադրանքի և ՀՀ-ում գործող շինարարական նորմերի:

Նախքան նախագծային աշխատանքները սկսելն ուսումնասիրվել է տարածքը և ֆիքսվել է ամբողջ բուսականությունը: Խմելու և տեխնիկական ջրի ջրամատակարարումը՝ նախատեսվում է իրականացնել պայմանագրային հիմունքներով՝ մոտակա Տաշիր համայնքից:

Կենցաղային կոյուղաջրերը նախատեսվում է հավաքել սեպտիկ հորում, որոնք այդտեղից կտեղափոխվեն մասնագիտական ծառայություն մատուցող ընկերության կողմից: Նախատեսվում է կառուցել սեպտիկ հոր, որի տարողությունը 35,6խմլ. է, չափերը 3,75x2,75x3,45 մ:

Սեպտիկ հորի կառուցման համար նախատեսվում է փորել փոս 4,25x3,25մ չափերով և 3,7 մ խորությամբ:

Էլեկտրամատակարարումը գոյություն ունեցող է:

Շինարարության ընթացքում տարածքում աշխատողների առավելագույն քանակը օրեկան 5-6 հոգի է:

1.4.2 Կառուցապատման տարածքի տեղադիրքը և իրավիճակային հատակագծերը



1.4.3 Հողային աշխատանքներ. շինտեխնիկա

Շինարարության ընթացքում արտանետումները կլինեն տեղայնացված՝ ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, գրունտի խոնավացում, տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում:

Կառուցվելու է անասնագոմեր 6 հատ, համապատասխանաբար 1954քմ, 2027քմ, 1772քմ, 2992քմ, 1710քմ, 1656քմ մակերեսներով, 2 կթարաններ՝ 452քմ և 435,87քմ մակերեսներով, պահեստ՝ 1108քմ, 2 հատ սիլոսի հորեր՝ 645 և 637քմ մակերեսներով, գոմաղբի հավաքատեղի՝ 14000իսմ, սեպտիկ հոր՝ 10,31քմ:

Նախատեսվող գործունեության ընթացքում հողային աշխատանքներ իրականացվելու են կթարանի, անասնագոմի, սեպտիկ հորի, պահեստի, սիլոսի հորերի և գոմաղբի հավաքատեղիի տարածքում:

- Անասնագոմեր 6 հատ՝ 12111քմ,
- 2 կթարաններ՝ 887,87քմ,
- պահեստ՝ 1108քմ,
- 2 հատ սիլոսի հորեր՝ 1282քմ,
- գոմաղբի հավաքատեղի՝ 854քմ

- սեպտիկ հոր՝ 10,31քմ:

Ընդամենը հողային աշխատանքներ կատարվելու են 16253,18քմ մակերեսի վրա: Հայցվող տարածքի հողաբուսաշերտի հզորությունը կազմում է միջինը 30 սմ, ուստի հողային աշխատանքների ընթացքում հանվող բուսաշերտի ծավալը կկազմի՝ մոտ 4875,95խմ:

Նախատեսվում է հողաբուսաշերտը կտրել պահեստավորել առանձին հատկացված վայրում, հետագայում այն կօգտագործվի տարածքի բարեկարգման նպատակով:

1.4.4 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ օգտագործվելու են հետևյալ շինանյութերը՝ քար, ավազ, շինափայտ, ցինկապատ թիթեղ: Նախատեսվող գործունեության ընթացքում հողային աշխատանքներ իրականացվելու են կթարանի, անասնագոմի, սեպտիկ հորի, պահեստի, սիլոսի հորերի և գոմաղբի հավաքատեղիի տարածքում:

- Անասնագոմեր 6 հատ՝ 12111քմ,
- 2 կթարաններ՝ 887,87քմ,
- պահեստ՝ 1108քմ,
- 2 հատ սիլոսի հորեր՝ 1282քմ,
- գոմաղբի հավաքատեղի՝ 854քմ
- սեպտիկ հոր՝ 10,31քմ:

Ընդամենը հողային աշխատանքներ կատարվելու են 16253,18քմ մակերեսի վրա: Հայցվող տարածքի հողաբուսաշերտի հզորությունը կազմում է միջինը 30 սմ, ուստի հողային աշխատանքների ծավալը կկազմի՝ 4875,95խմ: **Հանվող գրունտների մասին**

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Շինարարական աշխատանքներում մասնակցող աշխատողների ընդհանուր թիվը՝ 6 մարդ, որից

- Բանվորներ -5 մարդ
- ԻՏԱ – 1 մարդ

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W_{\text{է.ա.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 1 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 5 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 360 օր

$W_{\text{խ.տ.}} = (1 \times 0.016 + 5 \times 0.025) \times 360 = 50,76$ խմ/շին. ժամ.:

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 50,76 խմ/շին.ժամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում խմելու և կենցաղային կարիքների համար, ինչպես նաև ջրցանի համար անհրաժեշտ ջրային ռեսուրսները նախատեսվում է բերել մոտակա Տաշիր համայնքից պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվում է ապահովել ջրային ռեսուրսների հիդրոլոգիական, հիդրոմորֆոլոգիական, ջրաքիմիական պահպանության պահանջները:

- *Խմելու տնտեսական ջրմուղ (B1)*

Գործունեության համար նախատեսված խմելու-տնտեսական կարիքների համար ջուրը նախատեսվում է բերել մոտակա Տաշիր համայնքից պայմանագրային հիմունքներով:

- *Տնտ-կենցաղային կոյուղի (K1)*

Կենցաղային կոյուղաջրերը նախատեսվում է հավաքել սեպտիկ հորում, որի տարողությունը 35,6խմ է:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

«Տաշիր Ագրո» ՓԲԸ նախատեսում է ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի վարչական տարածքում իրականացնել հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Տաշիր, Բլագոդարնոյե համայնքի անասնագոմ №6-ի և կթարան №2-ի կառուցման աշխատանքներ:

Լոռու սարահարթը ընդգրկում է արևմտքում՝ Ջավախքի, հյուսիս-արևելքում՝ Վիրահայոց լեռների լանջերը: Տարածքի առավելագույն բարձրությունը 3196.0մ է (Աչասար լեռ):


Ամբողջ տարածքը հարավ-արևելյան թեքությամբ հարթավայր է, կտրտված Ձորագետի և նրա վտակների կիրճերով:

Բլագոդարնոյե գյուղի մոտով անցնում է հանրապետական նշանակության ունեցող Ստեփանավան-Տաշիր ավտոմայրուղին, հեռավորությունը կազմում է 3,5կմ:

Մոտակա երկաթուղային Ձորագետ կայանը գտնվում է հայցվող տարածքից ավելի քան 29կմ հեռավորության վրա:

Շրջանի կլիման բարենպաստ է, ամռանը զով, ձմեռը չափավոր ցուրտ: Տարեկան միջին ջերմաստիճանը +5.6°C-ից մինչև +6.4°C է: Տարեկան տեղումների միջին քանակը կազմում է 680-700մմ:

Տարածքի տեղամասը անտառազուրկ է:



Նկար 1. ՀՀ Լոռու մարզի ակնարկայի ն քարտեզ

2.2 Մեյամիկա և երկրաբանություն

Համաձայն 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերում» ներառված և ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզի՝ տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՄԵՅՄԱԻԿ ՎՏԱՆԳԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԵԶ

50 ՏԱՐԻՄ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ ԱՐԱԳԱՅՈՒՄՆԵՐԻ ԳԵՐԱԶՆԱՅՄԱՆ

10% ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱԲ Մասշտաբ 1 : 500 000



Մթնոլորտային օդի աղտոտումը կարող է լինել բնական և մարդածին:

Աղտոտման հիմնական պատճառներ կարող են հանդիսանալ՝

- վառելիքի այրումը (էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտ, արդյունաբերություն և տնային տնտեսություններ),
- արդյունաբերական արտանետումները, լուծիչների օգտագործումը, օրինակ քիմիական և հանքարդյունաբերության ոլորտում.
- գյուղատնտեսությունը,
- թափոնների բաց այրումը,
- բնական աղբյուրների, ներառյալ հրաբխային ժայթքումների, լեռնային փոշու տարածումը, բույսերից ցնդող օրգանական միացությունների արտանետումները և այլն:


Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ

գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Արտանետումները կարող են վնասահասցնել ինչպես մարդու առողջությանը և շրջակա միջավայրին, այնպես էլ տնտեսությանը: Մթնոլորտային օդի արտանետումների և օդի որակի միջև գոյություն ունի բարդ փոխկապակցվածություն, որը ներառում է արտանետման աղբյուրների բարձրությունները, քիմիական կազմի վերափոխումները, արևի ճառագայթների, եղանակային և տոպոգրաֆիկ ազդեցությունները:

ՀՀ և միջազգային պահանջների համաձայն մթնոլորտային օդի առաջնային աղտոտիչները հիմնականում համարվում են ծծմբի երկօքսիդը, ազոտի օքսիդները, ածխածնի մոնօքսիդը, փոշին, ինչպես նաև գետնամերձ օզոնը՝ որպես երկրորդային աղտոտիչ:


Բոլոր քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին շաբաթական, միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.meteomonitoring.am ինտերնետային կայքում:

Ստորև ներկայացվում է մթնոլորտային օդում որոշված նյութերի կոնցենտրացիաներն՝ ըստ քաղաքների:



Քաղաք


Ազոտի երկօքսիդ (NO₂)



Ազոտի երկօքսիդի պարունակությունը քաղաքներում 2022 թվականին





Քաղաք



Փոշի



2022 թվականին Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր քաղաքների փոշում որոշված մետաղներից նիկելի, մոլիբդենի և կոբալտի պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները, մնացած մետաղների համար ՍԹԿ-ները բացակայում են:



Ստորև ներկայացվում է փոշու մեջ որոշված մետաղների միջին տարեկան կոնցենտրացիաներն ըստ քաղաքների.





Երևան
Վանաձոր
Ալավերդի
Գյումրի
Հրազդան
Արարատ
Ծաղկաձոր

Վանաձոր
Ալավերդի
Երևան
Գյումրի
Արարատ
Ծաղկաձոր
Հրազդան



Ալավերդի
Երևան
Վանաձոր
Արարատ
Հրազդան
Գյումրի
Ծաղկաձոր

Երևան
Ալավերդի
Վանաձոր
Արարատ
Հրազդան
Ծաղկաձոր
Գյումրի

Մետաղների պարունակությունը քաղաքներում 2022 թվականի

Քաղաքների մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակ
Հանրապետության մթնոլորտային օդի որակի դիտարկումները 2022թ.


Քաղաքները	2021թ. գործող դիտակայաններ			Փորձանմուշների քանակը	
	Ակտիվ	Պասիվ (դիտակետ)	Ավտոմատ		
Երևան	5	45	1	ակտիվ	7058
				պասիվ	4376
				ավտոմատ	29324
Գյումրի	1	24		ակտիվ	332
				պասիվ	2302
Վանաձոր	3	24		ակտիվ	3222
				պասիվ	2517
Ալավերդի	3	42		ակտիվ	3129
				պասիվ	4307
Հրազդան	1	17		ակտիվ	1069
				պասիվ	1711
Արարատ	1	12		ակտիվ	375
				պասիվ	1233
Կապան		11		պասիվ	548
Քաջարան		15		պասիվ	745
Չարենցավան		10		պասիվ	885
Ծաղկաձոր	1	14		ակտիվ	1047
				պասիվ	1418
Ընդամենը	14	200	1	65598	
Ամբերդ	1			ակտիվ	571

ՀՀ քաղաքների մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը (ՄԱՑ)
2022թ.

Քաղաքը	ՄԱՑ	Նյութերը, որոնցով որոշվել է ՄԱՑ-ը
Երևան	2.14	1. ազոտի երկօքսիդ 0.61
		2. փոշի 1.15
		3. ծծմբի երկօքսիդ 0.34
		4. գետնամերձ օզոն 0.05
Վանաձոր	1.31	1. ծծմբի երկօքսիդ 0.15
		2. ազոտի երկօքսիդ 0.06
		փոշի 1.10
Ալավերդի	1.35	1. ծծմբի երկօքսիդ 0.22
		2. ազոտի երկօքսիդ 0.05
		3. փոշի 1.09
Հրազդան	1.74	1. ծծմբի երկօքսիդ 0.21
		2. ազոտի երկօքսիդ 0.21
		3. փոշի 1.31
Արարատ	0.99	1. ընդհանուր փոշի 0.30
Գյումրի	1.68	1. փոշի 0.61

2.3 Համայնքի կլիմայական պայմանները

Շրջանում ներկայացված են տարբեր կլիմայական տիպեր, որը պայմանավորված է լեռնային կտրտված ռելիեֆով և բացարձակ բարձրությունների զգալի տատանվումներով: Հիմնականում տարածաշրջանի կլիման բարեխառն է՝ զով, խոնավ ամառներով և չափավոր ցուրտ ձմեռներով: Ձյունը տեղում է ուշ աշնանն ու պահպանվում է մինչև ապրիլ-մայիս ամիսները: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը 650-700 մմ է, իսկ միջին ջերմաստիճանը $+8^{\circ}\text{C}$ - $+10^{\circ}\text{C}$: Ամենացուրտ ջերմաստիճանը դիտվում է հունվարին (-22°C), իսկ ամենաբարձր՝ օգոստոսին ($+36^{\circ}\text{C}$): Ամեն տարի ձևավորվում է կայուն ձնածածկույթ: Նկար 5-ում բերված է կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզը: Ստորև աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն օդի ջերմաստիճանի, մթնոլորտային տեղումների և ձնածածկի վերաբերյալ (ըստ մոտակա Տաշիր օդերևութաբանական կայանի տվյալների):



Նկար 5.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
- 4,8	- 3,8	- 0,7	5,7	10,4	13,3	16,0	15,7	12,1	7,4	2,2	- 2,5	5,9	-34	34

Օդի հարաբերական խոնավությունը

միջին ամսական Տեղումների քանակը _____, մմ օրական առավելագույն ըստ ամիսների													Ձնածածկույթ			
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ծածկույթը, սմ	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	
2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	

Օդի հարաբերական խոնավությունը, %														
ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա %	ամենաշոգամսվա, %
67	69	71	70	77	78	78	77	78	76	71	67	58	61	

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

միջին ամսական Տեղումների քանակը օրական առավելագույն												Ձնածածկույթ			
ըստ ամիսների												Տարե- կան	Առավել ագույնտա սնօրյա- կայինը արձրու- թյունը, ս մ	Տար վա մ եջձն ածա ծ- կույթ ով օր երի ք անա կը	Չյա ն մ եջջ րի առ ավ ե- լագ ույն քա նա կը, մմ
Հուն- վար	Փետր- վար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոս- տոս	Սեպ- տեմբեր	Հոկ- տեմբեր	Նոյեմ- բեր	Դե կտեմ- բե ր				
20	30	39	70	130	132	81	60	54	45	35	19	715	67	73	150

21

26	31	32	36	55	72	61	54	64	40	33	23	72			
----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	--	--	--

Քամի

հունվար	19	3	2	4	10	32	19	11	38	3,2	2,0	29	24	27	29
	2,6	2,0	2,2	3,0	4,2	5,1	4,9	3,3							
ապրիլ	35	10	4	5	8	16	7	15	37	2,1					
	2,7	2,6	2,3	2,5	2,9	4,0	3,4	2,8							
հուլիս	45	23	5	2	2	2	5	16	46	1,2					
	2,5	2,4	2,4	2,5	2,4	3,0	2,5	2,6							
հոկտեմբեր	39	7	3	4	6	13	11	17	44	1,5					
	2,6	2,2	2,0	2,1	2,5	3,6	3,2	2,7							

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈՒՆ ՍԿԻՉԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

27.	Տաշիր	-4.6	-3.7	0.0	5.9	10.3	13.7	16.4	16.1	12.4	7.6	2.1	-2.3	6.2	-34.1	34.6
-----	-------	------	------	-----	-----	------	------	------	------	------	-----	-----	------	-----	-------	------

Աղյուսակ 3 Օդի միջին առավելագույն (մ. ա.) և միջին նվազագույն (մ. ն.) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	մ. ա. / մ. ն.	ըստ ամիսների, °C												ընդամենը
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15

27.	Տաշիր	մ. ա.	1.9	2.5	6.1	12.2	16.6	19.7	22.1	22.3	19.2	14.7	8.8	4.1	12.5
		մ. ն.	-10.2	-9.3	-5.4	0.2	4.5	7.5	10.5	9.8	6.1	1.6	-3.1	-7.8	0.4

Աղյուսակ 4 Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	ա/ն	ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15

27.	Տաշիր	ա	16.0	17.3	23.3	26.1	29.3	30.4	34.6	33.7	32.2	28.4	22.5	19.1	34.6
		ն	-33.6	-31.5	-30.3	-19.4	-7.0	-4.5	0.1	-2.0	-8.2	-15.9	-27.4	-34.1	-34.1

Աղյուսակ 7 Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը ցուրտ ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (նվազագույն ջերմաչափով)									
	≤-15		≤-20		≤-25		≤-30		≤-35	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8	9	10

Տաշիր										
79. Դեկտեմբեր	4.7	18	1.5	7	0.3	3	0.02	2		
80. Հունվար	7.8	25	2.8	22	0.7	10	0.1	3		
81. Փետրվար	6.0	20	2.6	16	0.7	11	0.05	2		

Աղյուսակ 8 Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը տաք ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (առավելագույն ջերմաչափի տվյալներով)							
	≥25		≥30		≥35		≥40	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8

Տաշիր								
79. Հունիս	1.6	12	0.01	1				
80. Հուլիս	6.0	26	0.2	4				
81. Օգոստոս	8.0	29	0.5	10				

Աղյուսակ 9 Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները (°C)

(առավելագույնի միջինը՝ ա. մ., և նվազագույնի միջինը՝ ն. մ.)

Բնակավայրի անվանումը	ա.մ. / ն.մ.	ըստ ամիսների												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15

27. Տաշիր	ա.մ.	8.6	9.7	14.2	20.2	23.2	25.2	27.4	27.7	26.2	22.8	17.0	11.5	28.8
	ն. մ.	-22.1	-21.1	-17.3	-7.8	-1.8	1.8	4.3	4.0	-0.7	-6.0	-13.0	-19.6	-25.3

ՕՐԻ ՀԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օրի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օրի հարաբերական խոնավությունը, %																	
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օրի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օրի հարաբերական խոնավությունը, %		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	
																		15
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
27.Տաշիր		70	71	73	73	76	77	77	75	77	76	74	71	74	70	58	77	63

27.Տաշիր		70	71	73	73	76	77	77	75	77	76	74	71	74	70	58	77	63
----------	--	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----

ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը _____ միջին ամսական _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ	
	ըստ ամիսների															
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան			
																2
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
27.Տաշիր		22	28	42	76	131	139	81	62	53	49	33	19	735	144	591
		26	46	33	36	116	88	61	54	35	40	33	29	116		

27.Տաշիր		22	28	42	76	131	139	81	62	53	49	33	19	735	144	591
		26	46	33	36	116	88	61	54	35	40	33	29	116		

ՔԱՄԻ

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անորորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ				ըստ ուղղությունների									
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16

34.Տաշիր	հունվար	19	3	2	4	10	32	19	11	38	3.2	Հսկրլ	2.4	Հվկրմ	5.1
		2.6	2.0	2.2	3.0	4.2	5.1	4.9	3.3						
	ապրիլ	35	10	4	5	8	16	7	15	37	2.1				
		2.7	2.6	2.3	2.5	2.9	4.0	3.4	2.8						
	հուլիս	45	23	5	2	2	2	5	16	46	1.2				
		2.5	2.4	2.4	2.5	2.4	3.0	2.5	2.6						
	հոկտեմբեր	39	7	3	4	6	13	11	17	44	1.5				
		2.6	2.2	2.0	2.1	2.5	3.6	3.2	2.7						

▪ **Մթնոլորտային օդ**

Մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան տարածքում և հարակից շրջանում չկա:

Տարածքում օդի աղտոտվածության գնահատման համար ընդունվելու են ֆոնային կոնցենտրացիաների հետևյալ արժեքները.

- փոշի՝ 0.2մգ/մ^3 ,
- ծծմբի երկօքսիդ՝ 0.02մգ/մ^3 ,
- ազոտի երկօքսիդ՝ 0.008մգ/մ^3 ,
- ածխածնի օքսիդ՝ 0.4մգ/մ^3 :

Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) համեմատությամբ:

2022 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Համաձայն իրականացված արդյունքների 2022 թվականին 2021 թվականի համեմատությամբ քաղաքների մթնոլորտային օդում հիմնականում բարձրացել է ազոտի երկօքսիդի պարունակությունը:

Երևան քաղաքի մթնոլորտային օդում տարվա ընթացքում տարբեր հատվածներում, տարբեր օրերին դիտվել են փոշու, ազոտի և ծծմբի երկօքսիդների պարունակությունների գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ներից: Այստեղ մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում՝ տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն նաև Գյումրի, Վանաձոր, Հրազդան քաղաքներում: Ազոտի և ծծմբի երկօքսիդների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Բոլոր քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին շաբաթական, միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են www.meteomonitoring.am ինտերնետային կայքում:

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի արդյունքները / 2022 թվական



Է2 քաղաքների մթնոլորտի աղտոտվածության գույգանհշը (ՄԱՑ) 2022թ.

⊕

<u>Քաղաքը</u>	ՄԱՑ	<u>Լուրջեղ, որոնցով որոշվել է ՄԱՑ-ը</u>	ՄԱՑ
<u>Էրևան</u>	2.15	1. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.66	2.15
		2. <u>փոշի</u> 0.98	
		3. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.45	
		4. <u>գետնամերձ օզոն</u> 0.07	
<u>Վանաձոր</u>	1.18	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.08	1.18
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.08	
		<u>փոշի</u> 1.03	
<u>Ալավերդի</u>	1.01	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.15	1.01
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.06	
		3. <u>փոշի</u> 0.80	
<u>Հրազդան</u>	1.82	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.22	1.82
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.33	
		3. <u>փոշի</u> 1.28	
<u>Արարատ</u>	1.82	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.97	1.82
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.42	
		1. <u>ընդհանուր փոշի</u> 0.43	
<u>Գյումրի</u>	2.26	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.61	2.26
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.49	
		1. <u>փոշի</u> 1.16	
<u>Կապան</u>	0.58	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.43	0.58
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.15	
<u>Քաջարան</u>	0.61	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.47	0.61
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.15	
<u>Չարենցավան</u>	0.81	1. <u>ծծմբի երկօքսիդ</u> 0.52	0.81
		2. <u>ազոտի երկօքսիդ</u> 0.29	

2.4 Հողային ռեսուրսներ

Տեղամասի շրջանում զարգացած են մարգագետնային սևահողանման, գետահովտադարավանդային հողերը և սևահողերը: Սևահողերում ահողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով:

Մարգագետնատափաստանային սևահողանման հողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, մինչև 18%), ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզոր: Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է:

Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով

Մարգագետնասևահողային հողերի զարգացումն ընթանում է ստորգետնյա քաղցրահամ ջրերի մշտական ազդեցության պայմաններում, որոնք հիմնականում գտնվում են 1.5-3.0մ խորության վրա: Ստորին հորիզոններում պարզորոշ նկատվում են գլեացման հետքեր և երկաթի օքսիդների զգալի կուտակումներ:

Հայցվող տարածքի հողերը սևահող կրագերծված կարբոնատազուրկ հողեր են, որտեղ առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից առանձնապես խիստ չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում:

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%):

Այս հողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները հետևյալն են.

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Հումուսը, %	Կլանված հիմքերի գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում	Հիդրոլիզային թթվությունը, մ/էկվ 100գ հողում
Սևահողանման մարգագետնատափաստանային	0-5	18.1	49.3	6.2	4.6
	5-14	10.8	49.4	6.7	8.0
	14-27	7.8	44.7	6.7	7.5
	27-40	5.8	28.6	6.8	4.6
	40-61	2.0	22.7	6.8	2.7
	61-82	0.8	21.5	6.9	1.6
	82-120	0.4	22.0	7.0	1.4

Հայցվող տարածքում չկան հողային ռեսուրսները աղտոտող օբյեկտներ, և հողային ռեսուրսների աղտոտվածությունը գտնվում է նորմայի սահմաններում, ուստի հողերն աղտոտված չեն:

2.5 Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանը հարուստ է ջրային ռեսուրսներով: Ջրագրական հիմնական միավորը Չորագետ գետն է՝ իր Չերնայա, Տաշիր, Ուռուտ, Գյառ-գյառ, Մեծ-ձոր և բազմաթիվ այլ վտակներով: Գետերը պատկանում են Քուրի համակարգին և բնութագրվում են ձնա-անձրևային սնումով ու փոփոխական դեբիտով:

Դեբեդի վտակ Չորագետի երկարությունը 67 կմ է: Սկիզբ է առնում Չավախքի լեռնաշղթայի լանջերից: Լեռնահարթավայրային տիպի գետ է: Վերին հոսանքում՝ Լոռվա դաշտում, ունի հարթավայրային բնույթ՝ դանդաղահոս է, ցածրադիր, երբեմն ճահճապատ ափերով և հաճախ առաջացնում է գալարներ: Միջին հոսանքում՝ Ստեփանավան քաղաքից ներքև, գետը, ընդունելով Տաշիր խոշոր վտակը, մտնում է խոր, մինչև 100-120մ խորությամբ կիրճերի մեջ: Գետահովիտը նեղանում է՝ վերածվելով կիրճի, այնուհետև նեղ ու խորը կանիոնի: Չորագետի ջրահավաք ավազնի մակերեսը 1460 կմ² է:

Չորագետի սնումը խառն է. 53.2%-ը կազմում են ձնաանձրևային, իսկ 46.8%-ը՝ ստորերկրյա ջրերը: Ջրերն օգտագործվում են ոռոգման և էլեկտրաէներգիա ստանալու նպատակներով:

Տաշիր գետը Ձորագետի առավել խոշոր վտակն է: Տաշիր գետը սկիզբ է առնում Վիրահայոց լեռնաշղթայի լանջերից, հոսում Լոռվա սարահարթով, թափվելով Ձորագետ՝ գետաբերանից 28 կմ հեռավորության վրա: Վերին հոսանքում Գարգառ վտակնը նդունելուց հետո հովիտը լայնանում է, Ձորագետը միանում է Փամբակ գետին և սկզբնավորում Դեբեդ գետը:

Տարածաշրջանում է գտնվում Լոռու խորքային խմելու ջրերի հանքավայրը: Հանքավայրի խոշոր ջրատար հորիզոնը, որը սնվում է Խոնավ լեռներից, ուղղված է դեպի հարավ-արևելք և բեռնաթափվում է Տաշիր և Ձորագետ գետերի հովիտներում: Ջրատար հորիզոնը բեռնաթափվում է աղբյուրների երեք հզոր խմբերով (Նովոսելցևո՝ 505.2 լ/վրկ, Ակսյուտինի՝ 345.5 լ/վրկ, Կիզկալայի (Ախթալա)՝ 653.0 լ/վրկ պաշարներով), որոնք օգտագործվում են ջրամատակարարման նպատակով:

Բացի վերը նշված հիմնական ջրատար հորիզոնից, մակերևույթից 0.5-10 մ խորության վրա տարածված է այլովիալ-պրոլյուվիալ նստվածքների հետ կապված ջրատար հորիզոն (0.5-25.0 մ հզորությամբ), որի պաշարները կազմում են 24.7 լ/վրկ

«B» խմբով: Տարածված է նաև հրաբխային նստվածքների հետ կապված ջրային հորիզոն՝ 28.8 լ/վրկ (C₁-խմբի):

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալների՝ Ձորագետ գետի որակը 2-րդ դասին է պատկանում (լավ որակ), իսկ Տաշի գետի ջրերինը՝ 3-4 դասի (միջկանգնավարար որակ)՝ պայմանավորված երկաթի, ԿՆ, ԹՔՊ, նիտրատ իոնի, ֆոսֆատ իոնի պարունակությունների գերազանցումներով:

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ:

Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը

«լավ»-ից «անբավարար» որակի է (2-4-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին

խառնվելու արդյունքում դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով: Հատկապես աղտոտված է Փամբակ գետը՝ Վանաձոր քաղաքից հետո, Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Ախուրյան գետը՝ Գյումրի քաղաքից հետո, Կարկաչուն գետը՝ գետաբերանի հատվածում, Մեծամոր գետը՝ Քասախ գետի խառնվելուց հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Քասախ գետը՝ Ապարան քաղաքից հետո, Գետառ և Մարմարիկ գետերը՝ գետաբերանի հատվածներում, Վարարակ գետը՝ Գորիս քաղաքից ներքև հատվածում և Երևանյան լիճը:


Լոռու խորքային խմելու ջրերի հանքավայրի պաշարները /Լոռու Սարահարթի քաղցրահամ ջրերի հանքավայր/ հաստատված են 4 տեղամասերով՝

1. Նովոսելցովայի խմբի աղբյուրների ջրհավաք կառույցներ: Այն հայցվող տարածքից գտնվում է շուրջ 7,0կմ հեռավորության վրա, դեպի հարավ-արևմուտք:
2. Տաշիր հորատանցքի ջրհավաք կառույցներ: Այն հայցվող տարածքից գտնվում է շուրջ 9,5կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս-արևմուտք:
3. Աքուտինի խմբի աղբյուրների ջրհավաք կառույցներ: Այն հայցվող տարածքից գտնվում է շուրջ 6,6կմ հեռավորության վրա՝ դեպի հարավ:
4. Ղզալայի կամ Գետավանի խմբի աղբյուրների ջրհավաք կառույցներ: Այն հայցվող տարածքից գտնվում է շուրջ 9,1կմ հեռավորության վրա՝ դեպի հարավ-արևելք:


ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 39%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 33%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

ՀՀ գետերի ջրի որակի նկարագիրը 2021-2022 թվականներին




Պատկեր 2. Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը



Պատկեր 3. Գետերի ջրի որակի նկարագիրը ըստ ՋԿՏ-ների, 2022 թ.

ՀՀ մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



Աղյուսակ 1. Գետերի ջրի որակը 2022 թվականին

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի բնութագրիչ	Ջրի կարգավիճակի դասը ստ ֆիզիկաքիմիական բնութագրիչները	Ջրի կարգավիճակի ընդհանրական դասը ստ ֆիզիկաքիմիական բնութագրիչները

Հյուսիսային	Փամբակ	0.5 կմ գլ. Խնկոյանից վերև (1)	Երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	Կաջիճում, ՇԱԱ, ՇՀԱ	3-րդ	4-րդ
			Նիտրատ իոն	4-րդ	
		1 կմ ք. Վանաձորից վերև (3)	Նիտրատ իոն, ՇՀԱ, ԿՉՆ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	Նիտրատ իոն, մոլիբդեն, ՇՀԱ, ԿՉՆ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ՇԱԱ, ընդհանուր ֆոսֆոր		4-րդ		
	Ամոնիում իոն		5-րդ		
	Դեբեդ	0.5 կմ Մարցիգետ թափման կետից ներքև (5)	Ամոնիում իոն, մանգան, ԿՉՆ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Այրումից վերև (6)	Նիտրատ իոն	3-րդ	4-րդ
			Մոլիբդեն	4-րդ	
		սահմանի մոտ (7)	Երկաթ	3-րդ	4-րդ
	Մոլիբդեն, ԿՉՆ		4-րդ		
	Չորագետ	0.5 կմ ք. Ստեփանավանից վերև (8)	Կազմիում, վանադիում	3-րդ	4-րդ
			Մանգան	4-րդ	
		Գետաբերան (10)	Մանգան, ԿՉՆ	4-րդ	4-րդ
Տաշիր	0.5 կմ գլ. Միխայելովկայից վերև (11)	Ամոնիում իոն, մանգան, երկաթ	3-րդ	3-րդ	

	Տաշիր	0.5 կմ գլ. Մարատովկայից ներքև (12)	-	2-րդ	2-րդ
--	-------	------------------------------------	---	------	------

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։ Խնկոյան գյուղից վերև հատվածում՝ պայմանավորված երկաթով և ալյումինով, Վանաձոր քաղաքից վերև՝ նիտրատ իոնով, ընդհանուր լուծված աղերով և կախութային չոր նյութերով։ Սպիտակ քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով։ Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով։

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև գնահատվել

է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով և կախութային չոր նյութերով: Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է

«անբավարար» (4-րդ դաս). Այրում քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված մոլիբդենով, սահմանի մոտ՝ մոլիբդենով և կախութային չոր նյութերով:

Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս). Ստեփանավան քաղաքից վերև՝ պայմանավորված մանգանով, գետաբերանում՝ մանգանով և կախութային չոր նյութերով:

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում գնահատվել է

«միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով և երկաթով: Մարատովկա գյուղից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ

դաս)՝ պայմանավորված ցինկով, պղնձով, կադմիումով, մանգանով, կոբալտով, անագով, սուլֆատ իոնով և կախութային չոր նյութերով:


Գարգառ գետի ջրի որակը ակունքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Շնող գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և սուլֆատ իոնով:

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև և ներքև, Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Դիլիջան քաղաքից վերև՝ պայմանավորված երկաթով և կախութային չոր նյութերով, Դիլիջան քաղաքից ներքև՝ նաև նիտրիտ իոնով, Իջևան քաղաքից վերև՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով, երկաթով, բարիումով և կախութային չոր նյութերով, Իջևան քաղաքից ներքև՝ ամոնիում և նիտրիտ իոններով, երկաթով, բարիումով, ընդհանուր ֆոսֆորով և կախութային չոր նյութերով:

Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Վահան գյուղից վերև՝ պայմանավորված ամոնիում իոնով, երկաթով և կախութային չոր նյութերով, գետաբերանում՝ ամոնիում իոնով և բարիումով:

ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



Գործունեության համար հայցվող տարածքում գրունտային ջրերը բացակայում են:

2.6 Բուսական և կենդանական աշխարհ

Բուսական աշխարհ.

Ընդհանուր առմամբ տարածքում զարգացած է մարգագետնատափաստանային բուսականություն՝ Festuca, Phleum, Carex, Trifolium ցեղերի բուսատեսակների մասնակցությամբ (նկար 8):

Տորֆակուտակների տարածքում, լոկալ, մասնատված տեղամասերով՝ աճում է ջրաճահճային բուսականություն: Ֆլորային պարզեալային սպեկտրում գերիշխում է Asteraceae ընտանիքը, աննշան զիջում են Poaceae և Fabaceae ընտանիքի բույսերը:

Հայցվող տարածքի մակերեսը ծածկված է բուսազանգվածով, որը

ներկայացված է եղեգնա-բոշխային տեսակների, շերեփուկախոտի, կյունի, ճահճախոտի, մակարդախոտի, կեռոնների, դրանց չորացած և կիսափթած արմատների և ցուղունների, ինչպես նաև կանաչ մամուռների խառնուրդով:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից բազմազան են հատկապես միջատները՝ ճպուռներ, ուղղաթևեր, թիթեռներ, բզեզներ:

Ըստ գրական տվյալների, կենդանական պլանկտոնը ներկայացված են Rotatoria, Cladocera և Cyclopoida տեսակներով, իսկ բենթոսը՝ Crustacea, Diptera, Odonata տեսակներով:

Երկկենցաղներից դիտարկվել են կանաչ դոդոշը և լճագորտը, թչուններից՝ սարյակ, խաղտոտիկներ, կեռնեխ և ճնճղուկներ:

Խոշոր կաթնասուններից շրջանում գրեթե ամենուր հանդիպում են եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*) և աղվեսը (*Vulpes vulpes*):

Տարածաշրջանում հանդիպում է նաև Ներկարար /*Coraciiformes*/,

Արտաքին կառուցվածք՝

Մարմնի երկարությունը մինչև 34 սանտիմետր է, քաշը՝ 180-200 գրամ: Փետրավորումը կոշտ է, կապտականաչ, մեջքը և թևերը (վերևից)՝ ժանգադարչնագույն:

Տարածվածություն

Տարածված է Եվրոպայում, Հարավարևմտյան Ասիայում և Հյուսիսարևմտյան Աֆրիկայում: Հայաստանում հանդիպում է (ապրիլի վերջերից մինչև սեպտեմբեր) բանջարանոցներում, այգիներում և առավելապես տափաստաններում ու կիսաանապատներում՝ մինչև 2500 մետր բարձրության վրա:

Բնադրում

Ներկարարները բնադրում են փչակներում կամ դարավանդներում, գետնափոր բներում: Դնում է 4-6 սպիտակ ձու, թիսում 18-19 օր:

Սննդառություն

Սնվում է միջատներով, փոքր անողնաշարավորներով, մանր

կրծողներով, ամռան վերջին՝ նաև խաղողով:

Փոքր ճագարամուկ /*Allactaga elater*/ կենդանատեսակները:

Արտաքին կառուցվածք՝

Մարմնի երկար, մինչև 120 մմ է, պոչինը՝ 175 մմ, կենդանի զանգվածը՝ մինչև 62 գ: Մարմնի կառուցվածքը տիպիկ է, մեջքի և կողքերի գույնը՝ բաց մոխրադեղնավուն: Պոչի վրձինը եռագույն է՝ բաժանված սպիտակավուն, սև և սպիտակ մասերի: Բնակավայրերին մոտ տարածքներում սովորական է և քչաքանակ:

Տարածվածություն՝

Տարածված է կիսաանապատային գոտու հարթավայրերում և նախալեռներում: Գերադասում է աղասեր և օշինդրային խմբակցություններով հարուստ վայրերը:

Սննդառություն՝

Սնվում է բույսերի վերև ստորգետնյա մասերով, սերմերով, երբեմն՝ միջատներով ու նրանց թրթուրներով:

Կենսակերպ՝

Բնակվում է մինչև 3 մ երկարության և 1 մ խորության ստորգետնյա բներում: Գործունյա է մթնշաղին և գիշերը: Շարժվում է ցատկավազքով կամ քայլելով: Ձմեռային քուն է մտնում նոյեմբերից մարտ:

Բազմացում և զարգացում՝

Բազմանում է տարին 1 անգամ, ունենում 2-6 ձագ: Համաճարակաբան, նշանակությունն աննշան է:

Տարածաշրջանում հանդիպում են՝

-Գորտնուկ երկարատերև- *Ranunculus linqua* L. Բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակը: Կատեգորիա. EN* B 1 ab (i,ii,ii,iv)+ 2 ab (i,ii,ii,iv): Այն վտանգված տեսակ է, հայտնի է մեկ պոպուլյացիա, տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աչելավայրերի պայմանների փոփոխության

պատճառով: Նկատի ունենալով, որ տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև EN: Հայաստանի կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներով:

- Ջրաշուշան սպիտակ: - *Nymphaea alba* L., Կատեգորիա. EN B 1 ab (iii)+ 2 ab (iii): Այն վտանգված տեսակ է, հայտնի է

Լոռու սարահարթի ռելիկտային լճերից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ կմ-ից պակաս է: Նախկինում, մինչև 1930թ աճում էր նաև Աարանի ֆլորիստիկ շրջանում, Մարմարիկ գետի միջին հոսանքի ձախափնյա ողողատներում գետի զարնանային վարարումներից առաջացած փոքրիկ լճակներում: Այստեղ տեսակը ոչնչացել է բնական և մարդածին գործոնների բացասական ազդեցության հետևանքով՝ Մարմարիկի սակավաջրության, ժամանակավոր լճակները ցամաքելու, տնտեսական գործունեության և այլ պատճառներով: Տեսակին Հայաստանում սպառնում է անհետացում տնտեսական գործունեության ընդարձակման և կլիմայի զրոքալ փոփոխության պատճառով: Հայաստանի կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 3 կրճատվող տեսակ կարգավիճակով:

-Սրգահավ- *Crex crex*, կարգավիճակը խոցելի տեսակ է: Ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում)(ver. 3.1) <<Near Threatened>> կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես Խոցելի՝ VU B1ab(iii)+2ab(iii):

Վերը նշված տեսակներն հանդիպում են տարածաշրջանում, իսկ բուն հայցվող տարածքում կենդանիների բներ, որջեր չի դիտարկվել, չկան նաև բնադրող թռչունների բներ:

Նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանատեսակներ չեն հանդիպել:

▪ **Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Տարածքը չի հանդիսանում բնությանհատուկ պահպանվող տարածք: Բնության

պահպանվող ամենամոտ տարածքը Գյուլագարակի պետական արգելավայրն է, որը գտնվում է տարածքից մոտ 21կմ հեռավորության վրա: Արգելավայրը հիմնադրվել է 1958 թվականին, զբաղեցնում է 2576 հա տարածք, գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Բագումի և Գուգարացլեռների լանջերին, Քարհանք-ջուր գետակի հովտում, ծովի մակարդակից 1300-1850մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ ռելիկտային սոճու անտառները:

Տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն արձանագրվել:

Տարածաշրջանում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներից հայտնի են.

թրաշուշան Ջավախքի - վտանգված տեսակ, աճում է Տաշիր քաղաքի և Ուրասար գյուղի շրջակայքում, տարածքից 7.0կմ և 11.0կմ հեռավորության վրա,

- ջրաշուշան սպիտակ- վտանգված տեսակ, հայտնի է Լոռու սարահարթի լճակներից, տարածքին ամենամոտը գտնվում է մոտ 7,5կմ հարավ,

- նեղտերև Դողոնի - վտանգված տեսակ, աճում է Տաշիրի շրջակայքում, տարածքից մոտ 7.0կմ հեռավորության վրա,

- գորտնուկ երկարատերև- վտանգված տեսակ է, աճում է Տաշիր քաղաքի, Մարատովկա և Նովոսելցովո գյուղերի շրջակայքում՝ գետերի աջին, խոնավ վայրերում, տարածքին ամենամոտ լոկալիտը գտնվում է մոտ 3,5կմ հեռավորության վրա:

- ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից շրջանում գիտական ուսումնասիրությունների տվյալներով հայտնի են.

- նեղ խխունջ- հազվագյուտ տեսակ, հայտնի է Ստեփանավան քաղաքի շրջակայքում, տարածքից մոտ 14կմ հեռավորության վրա,

- ճպուռ ճահճային- ծայրահեղ հազվագյուտ տեսակ, հայտնի է Ստեփանավան քաղաքի շրջակայքում, տարածքից մոտ 11կմ հեռավորության վրա,

- ստեփանավանյան առվակային գնայուկ և մթնաշաղային կապտաթիթեռ

- հազվագյուտ տեսակներ, հայտնի են Ստեփանավան քաղաքի շրջակայքում, տարածքից մոտ 11կմ հեռավորության վրա,

- Տարգալակտուզ - անհետացող տեսակ, հայտնի է Ստեփանավանի շրջանի գերիտոնավ տարածքներում, Արփի լճում, տարածքից 15-29կմ հեռավորության վրա,

- սպիտակաաչք սուզաբադ և մոխրագույն կռունկ - քիչ տարածված տեսակներ են, հայտնի են Ստեփանավանի լճակներից, տարածքին ամենամոտը գտնվում է մոտ 5,5կմ հարավ,

- բալոբան - անհետացող տեսակ, հայտնի է Ստեփանավան քաղաքի շրջակայքից, տարածքից մոտ 14,5կմ հեռավորության վրա:

- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

ՀՀ Լոռու մարզում հաշվառված են հետևյալ բնության հուշարձանները

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1	«Բազալտանման ապարների (Դիաբազների) գոլավոր դայք»	Ալավերդի քաղաքային համայնք, Լավար գետի միջին հոսանք, կիրճի աջ ափին՝ Դարկ լեռնագագաթի հարավ-արևելյան ստորոտին, Ալավերդի «Լենհանքեր» ավտոճանապարհից մոտ 300 մ դեպի արևմուտք, Մադան գյուղի արևմտյան ծայրամասից մոտ 500 մ դեպի արևմուտք
2	«Գետնանձավ» անձավային թունել	Լոռի Բերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Ձորագետի ձախ ափին, հունից 40 մ բարձրության վրա
3	«Ձորագետի հրային ներժայթուկ»	Ձորագետ և Փամբակ գետերի հատման կետում, Ալավերդի-Վանաձոր ավտոմայրուղու աջ կողմում՝ մոտ 10 մ չհասած առաջին թունելի մուտք
4	«Տրավերտիններ դոլերիտային բազալտներում»	Մարց գյուղի խաչմերուկից մոտ 50 մ վերև, Մարց-Աթան գրունտային ավտոճանապարհի ձախ կողմում
5	«Թռչկան» ջրվեժ	Մեծ Պառնի գյուղական համայնք, Չիչխան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա
6	«Դսեղի Ծովեր» լիճ	Դսեղ գյուղից 3 կմ արևելք-հարավ-արևելք, Սևորդաց լեռնաշղթայի Ծովիղաշ լեռնագագաթի հյուսիսային լանջի ափսեաձև գոգավորությունում
7	«Շամլուղի լճակ»	Շամլուղ գյուղական համայնք
8	«Օձի պորտ»	Արդվի գյուղական համայնքի արևելյան մասում, Հովնան Օձունեցու կաթողիկոսի մատուռից 120 մ հյուսիս-արևմուտք

9	«Քոշաքարի մրտավարդ»	Մարգահովիտ գյուղական համայնքի հյուսիսային սահմանագծից մոտ 1 կմ հեռավորության վրա, Գուգարքի անտառտնտեսության Եղեգնուտի անտառպետության բարձրադիր գոտում
---	---------------------	---

Հայցվող տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Լոռու մարզի բնության հուշարձաններից տարածքին ամենամոտ գտնվողը «Գետնանձավ» անձավային թունելն է՝ տեղամասից մոտ 16,0կմ հեռավորության վրա:

4.7 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը



Ընդհանուր տեղեկություններ

Աշխարհագրական դիրքը՝ Հայաստանի Հանրապետության հյուսիս
 Բնակավայրերը՝ ծովի մակերևույթից 520-ից 1800մ
 բարձրության վրա
 Պետական սահմանը՝ Կրաստանի Հանրապետության
 հետ՝ 110 կմ
 Տարածությունը՝ 3799 քառ. կմ

Բնակչության թիվը՝ 211.5 հազար մարդ, այդ թվում՝ 6198 արցախցի

- քաղաքային 124.0, հազար մարդ,
- գյուղական 87.5 հազար մարդ,

Մարզի համայնքների թիվը՝ 11
 Բնակավայրերի թիվը՝ 128

- Մարզկենտրոնը ք. Կանաձոր
- Կառավարման ձևը տարածքային կառավարում

- Ազգային կազմը
- հայեր 97.0 %,
 - ռուսներ 1.5 %,
 - հույներ 1.0 %,
 - այլ ազգություններ 0.5 %:

ԲՆԱԿՖՈՆԴ



❖ Լոռու մարզում գլխավոր հատակագիծ ունեն Ալավերդի, Ախթալա, Տաշիր, Ստեփանավան քաղաքային համայնքները, Վանաձոր համայնքի գլխավոր հատակագիծը մշակման փուլում է:

❖ Մարզի քաղաքային համայնքներում առկա է 1759 բազմաբնակարան շենք, անավարտ մնացած տարբեր աստիճանի պատրաստվածության բազմաբնակարան շենքերի քանակը 240 է, 3-րդ կարգի վթարայնություն ունեցող և ամրացման ենթակա շենքերի քանակը՝ 444: Վերելակներ գործում են Վանաձոր և Ալավերդի համայնքների բազմաբնակարան շենքերում: Նշված համայնքներում առկա է թվով 192 վերելակ, որից 136՝ սարքին, 56՝ անսարք:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕՋՏԱԳՈՐԾՈՒՄ



❖ 2023թ. կազմվել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների փոփոխման 30 հողաշինական գործ, որոնք միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ստացել են դրական եզրակացություն:

❖ 2023 ընթացքում Լոռու մարզի համայնքներում փոփոխության է ենթարկվել 27.40 հեկտար հողամասերի նպատակային նշանակություն, որի արդյունքում համայնքային բյուջե է մուտքագրվել 8249.97 հազ. դրամ կադաստրային արժեքների տարբերություն:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ



«Լոռու մարզի գյուղատնտեսական հողատեսքերը 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ»

	<i>(հեկտար)</i>					
	Գյուղ. նշանակության հողեր, ընդամենը	Վարելահողեր	Բազմամյա տնկարկներ	Խոտհարքներ	Արոտներ	Այլ հողատեսքեր
Լոռու մարզ	250795.0	41927	456	35060	145591.7	27759.5

- ❖ Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագրի շրջանակներում՝ ինտենսիվ այգիների հիմնման համար ծախսերի մասնակի փոխհատուցման բաղադրիչով կնքվել է «Պետական աջակցություն տրամադրելու մասին» 8 պայմանագիր՝ 14.27 հա այգեհիմնման համար: Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար, փոխհատուցման բաղադրիչով ստացվել է մասնակցության 1 դիմում՝ 1.023 հա-ի համար: Կնքվել է թվով 2 պայմանագիր՝ 2.591 հա-ի համար:
- ❖ Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագրի շրջանակներում՝ ներկայացվել է մասնակցության 1 հայտ և կնքվել է պայմանագիր՝ խոզաբուծության ոլորտում շուրջ 4.7 մլրդ ՀՀ դրամի չափով ներդրում կատարելու համար:
- ❖ Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության ծրագրի շրջանակներում՝ ներկայացվել է մասնակցության 2 դիմում: 2021 և 2022 թվականներին պայմանագիր կնքած 2 շահառուի տրամադրվել է 17.5 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 3-րդ մոդելի՝ շուրջ 90 գլուխ ԽԵԿ-ի համար նախատեսված «Խելացի» անասնաշենքի կառուցման 1-ին փուլով սահմանված աշխատանքների կատարման համար:
- ❖ Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագրի շրջանակներում՝ թվով 3366 շահառուի տրամադրվել է 656.3 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ 7284.8 հա-ի վրա աշնանացան ցորենի ցանքս կատարելու համար:

❖ 2023թ. մարզի համայնքներում օտարվել է 198 միավոր հողամաս 56.85 հեկտար մակերեսով: Աճուրդների մեկնարկային գները սահմանվել են կադաստրային արժեքներով կամ գերազանցել են այն: 2023թ. հողամասերի աճուրդներից համայնքների բյուջե է մուտքագրվել շուրջ 163 431 486 ՀՀ դրամ: Օտարված 198 միավորի հողամասերը օտարվել են հողամասի կադաստրային արժեքից բարձր գնով:

- Հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն	27.40 հա	8.2 մլն դրամ համայնքային բյուջե
Կյուղատնտեսականի փոփոխություն 17.16 հա		
- Համայնքային և պետական սեփ. հողերի վարձակալություն	29116.8 հա	134.5 մլն դրամ համայնքային բյուջե
- Աճուրդ վաճառք	56.85 հա	163.4 մլն դրամ համայնքային բյուջե

❖ Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 119.86%-ը:

❖ Ընդհանուր առմամբ 2023թ. վարձակալության տրամադրման համար նախատեսված 20693.3 հա պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 5991.7 հա 3352.4 հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 3475.8 հազ. դրամ վարձավճար, հավաքագրումը կազմել է 104 %:

❖ 2023թ. վարձակալության տրամադրման համար նախատեսված 101148 հա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 29116.8 հա 173872.5 հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 134513.9 հազ. դրամ վարձավճար: Լոռու մարզի համայնքների կողմից հողերի վարձակալությամբ տրամադրման վարձավճարների հավաքագրումը կազմել է 77.4%:

❖ ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշման համաձայն կազմվել և ժամանակին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և ՀՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել մարզի հողային հաշվեկշիռը 2023թ. հուլիսի 1-ի դրությամբ:

Լոռու մարզի հողային հաշվեկշիռի համաձայն մարզի վարչական տարածքը կազմում է 379864.5 հա, որից գյուղատնտեսական նշանակության 250795.0 հա, բնակավայրերի՝ 16536.2 հա, արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ 4025.1 հա, էներգետիկայի կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 1675.5 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2405.6 հա, հատուկ նշանակության՝ 1217.4 հա, անտառային՝ 100603.0 հա, ջրային՝ 2606.7 հա:

Գյուղատնտեսական նշանակության՝ 250795.0 հա հողերից, որից վարելահող 41927.0 հա, բազմամյա տնկարկ 456.0 հա, խոտհարք 35060.8 հա, արոտ 145591.7 հա, այլ հողատեսք 27759.5 հա: Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականություն համարվող

❖ Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում՝ 2023 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է Լոռու մարզի շահառուների կողմից ներկայացված 10 հայտ 174.9 մլն դրամի չափով, կնքվել է 33 հումքի գնման պայմանագիր, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 19.9 մլն դրամ:



❖ Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում՝ 2023 թվականի նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է Լոռու մարզի շահառուների կողմից ներկայացված 4 հայտ 140.9 մլն դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 38.3 մլն դրամ:

❖ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում՝ 2023 թվականին՝ դեկտեմբերի 1-ի դրությամբ Լոռու մարզում ձեռք է բերվել 64 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 21 միավոր տրակտոր, 1 միավոր կոմբայն: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 226.1 մլն դրամ, սուբսիդավորման գումարը՝ շուրջ 31.8 մլն դրամ:

❖ «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագրի շրջանակներում՝ Լոռու մարզում 2023 թվականի գյուղատնտեսական տարվա համար Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ ապահովագրական ընկերությունների կողմից վճարվել է 2694 հատ ապահովագրության պայմանագիր՝ 3152 հա ընդհանուր մակերեսով տարածքի համար: Ապահովագրվել են հիմնականում հացահատիկ և կարտոֆիլ մշակաբույսերը՝ կարկուտ, հրդեհ և երաշտ ռիսկերից: 2023 թվականին՝ դեկտեմբերի 1-ի դրությամբ ապահովագրական պատահարների հետևանքով ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 1221 ապահովագրական հատուցում՝ շուրջ 283.9 մլն դրամի չափով:



❖ Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարարուծության զարգացման ծրագրի շրջանակներում՝ ձեռք է բերվել 17 գլուխ տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ: Հաշվետու ժամանակահատվածում ներդրումների գումարը կազմել է 11 մլն դրամ:

❖ Մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու ծրագրի շրջանակներում՝ 2023 թվականին մարզին անհատույց հատկացվել է 1694 լիտր մկնասպան թունանյութ, որը բաշխվել է մարզի համայնքներին մկնանման կրծողների դեմ քիմիական միջոցառումներ իրականացնելու համար: Ներդրման գումարը կազմել է շուրջ 10.24 մլն դրամ:

❖ «Լոռի» ՋՕԸ-ի կողմից ոռոգման համակարգի վերանորոգման և գարնան նախապատրաստական աշխատանքների վրա կատարվել է 50319,0 մլն դրամի ներդրում:



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2023թ. Լոռու մարզում գործել է.

✓ 6 բուհ, որից 2-ը ոչ պետական, 11 միջին մասնագիտական, որից 1-ը ոչ պետական, 2 արհեստագործական պետական ուսումնական հաստատություններ

✓ 74 նախադպրոցական ուսումնական հաստատություն (1-ը՝ պարապուրդում)՝ 4443 երեխաներով:

✓ 164 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում՝ 80-ը՝ միջնակարգ, 68-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ /մաթեմատիկայի և քնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ/, 13 ավագ դպրոց, 2 վարժարան և 1 մասնավոր դպրոց:

Ազդակիր համայնք Այն ներառված է Տաշիր խոշորացված համայնքի Բլագոդարնոյե բնակավայրի վարչական տարածքում:

Տաշիր համայնքը գտնվում է մարզի հյուսիս արևմտյան մասում: Համայնքը՝ հյուսիսից սահմանակից է Մեծավան համայնքին, հյուսիսից և հյուսիս-արևելքից՝ Սարչապետ համայնքին, արևելքից՝ Լոռի Բերդ համայնքին, հարավից՝ Ստեփանավան համայնքին, արևմուտքից՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզին: Ունի ծովի մակարդակից 1500մ բարձրություն: Համայնքով հոսում է Տաշիր գետը, որը հանդիսանում է Դեբետ գետի վտակ: Կլիման բարեխառն է, օդի հունվարյան միջին ջերմաստիճանը՝ -4,9°C, հուլիսինը՝ 18-20 °C: Տարեկան թափվում են 420 մմ մթնոլորտային տեղումներ: Տաշիր համայնքի վարչական տարածքը 40359,04հա է, հեռավորությունը մարզկենտրոնից 52կմ է, հեռավորությունը մայրաքաղաքից 163կմ: Տաշիր համայնքով է անցնում միջպետական նշանակության Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստան մայրուղին: Տաշիրը մարզի երկրորդ այրնտարանաքային հնարավորությունն է Վրաստանի Հանրապետություն դուրս գալու համար:

.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ-2018թ.

1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ2) 326472
 2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը 41
 3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը 4807
- ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա) 20458,62
 2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա) 36040.95
 3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա) 40359,04
 4. Խոշոր եղջրավոր անասունների գլխաքանակը 8952
 6. Մանր եղջրավոր անասունների (ոչխարնայծ) գլխաքանակը 1774

7. Խոզերի գլուխաքանակը 450

4.8 Պատմամշակութային և բնության հուշարձանները

ՀՀ Լոռու մարզի Բլագոդարնոյե գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թվականին հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 3 հուշարձան (1 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Ամրոց	Ք. ա. 3-2 հզ	գյուղից 1 կմ հվ
Բնակատեղի	Ք. ա. 3-2 հզ	
Դամբարանադաշտ	Ք. ա. 2-1 հզ	

Պատմամշակութային հուշարձանի իրավիճակի վրա նախատեսվող աշխատանքներ որևիցե ազդեցություն չեն ունենալու, քանի որ մշակութային հուշարձանները գտնվում են տարածքից շուրջ 13.0-17.5կմ հեռավորության վրա :

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ և ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

Նախատեսվում են հիգիենիկ պահանջներ՝

- Կենդանիների առողջության վերահսկում.
Նախատեսվում է կիրառել սենսորներ կամ մոնիթորինգի համակարգեր՝ անընդհատ վերահսկելու կենդանիների վիճակը, հայտնաբերելով հիվանդությունները վաղ փուլերում:
- Մանրի և ջրի հիգիենա. Նախատեսվում է ապահովել համապատասխան ջերմաստիճան և մաքրության ջրի և սննդի ապահովում՝ բացառելով աղտոտումները:
- Կենցաղային պայմանների մաքրության ապահովման համար.
Նախատեսվում է ավտոմատացված համակարգեր, որոնք պետք է ապահովեն՝ հատակի և օդի մշտական մաքրությունը՝ կանխելով վարակների տարածումը:
- Վնասատուների վերահսկում. Նախատեսվում է իրականացնել պարբերական ախտահանում և մոնիթորինգ՝ կանխելու վարակիչ հիվանդությունների տարածումը:
- Կեսաբանական թափոնների կառավարում. Նախատեսվում է իրականացնել անասնագումում կենսաբանական թափոնների (արտազատումներ, կեղտաջրեր) ճիշտ կառավարում՝ օգտագործելով կոմպոստավորման կամ այլ վերամշակման մեթոդներ:
- Էներգիայի արդյունավետ օգտագործում. Անասնագումերը պետք է նվազագույնի հասցնեն էներգիայի սպառումը՝ օգտագործելով վերականգնվող էներգիայի աղբյուրներ, ինչպիսինք են արևային էներգիան:
- Օդի որակի կառավարում. Նախատեսվում է ապահովել մթնոլորտային օդի մաքրման համակարգեր՝ նվազեցնելու գազային արտանետումները (օրինակ՝ ամոնիակ կամ մեթան), գարշահոտության բացառումն ապահովող անհրաժեշտ տեխնոլոգիական սարքեր:
- Հողերի պաշտպանություն. Նախատեսվում է արտանետումների և թափոնների կառավարում հողի աղտոտումը և էրոզիան կանխելու համար:
- Գոմաղբի օգտագործում. Ըստ պահանջարկի կնախատեսվի գոմաղբի կիրառություն գյուղտնտեսական նպատակներով՝ վերամշակված պարարտանյութի ձևով:

Մթնոլորտային արտանետումներ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են՝

- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումները (վառելիքի այրման արդյունքում):

Շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցները, որոնք այլանավորվում է օգտագործել գործունեության իրականացման ժամանակ, հանդիսանում են չկազմակերպված արտանետումների հիմնական աղբյուրները:

Փոշու արտանետումների հաշվարկի մեթոդակարգը

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հողային/փորման աշխատանքներից և գրունտի տեղափոխման օպերացիաներից փոշու արտանետումները որոշվում են ըստ մեթոդակարգի՝ հետևյալ բանաձևով.

$$Q = K_1 \cdot K_2 \cdot K_3 \cdot K_4 \cdot K_5 \cdot K_7 \cdot K_8 \cdot B \cdot G \quad (1)$$

Որտեղ՝

Q- արտանետվող անօրգանական փոշու քանակությունն է տեխնոլոգիական օպերացիայի/ միջոցառման ժամանակահատվածի կտրվածքով, տ,

K₁- փոշու ֆրակցիայի բաժնեմասն է,

K₂- 0÷50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում,

K₃- տեղանքի օդերևութաբանական պայմանները հաշվի առնող գործակիցն է,

K₄- տեղանքի պայմանները հաշվի առնող գործակիցն է,

K₅- նյութի խոնավությունը հաշվի առնող գործակիցն է,

K₇- նյութի խոշորությունը հաշվի առնող գործակիցն է,

K₈ - տարբեր նյութերի համար ճշգրտող գործակիցն է կախված գրեյֆերի տեսակից, փոխաբեռնման այլ սարքավորանքի օգտագործման դեպքում,

B- նյութի բեռնաթափման բարձրությունը հաշվի առնող գործակիցն է,

G - վերամշակվող նյութերի քանակությունն է կառուցման ժամանակահատվածի կտրվածքով, տոննա:

Տրանսպորտային միջոցների և տեխնիկայի վառելիքի ծախսի որոշման մեթոդակարգը

Նախատեսվող գործունեության ընթացքում կիրառվող տրանսպորտային և շինարարական տեխնիկայի գազանման արտանետումների հաշվարկման համար անհրաժեշտ է որոշել դրանց վառելիքի ծախսը, ինչը հաշվարկվում է ըստ ընթացակարգերի՝ հետևյալ բանաձևով.

$$M_H = (0.001 \cdot H_{SC} \cdot S + H_T \cdot T) \cdot (1 + 0.01 \cdot D), \quad \text{լ կամ (2) ,}$$

$$M_H = (0.001 \cdot H_{SC} \cdot S + H_T \cdot T) \cdot (1 + 0.01 \cdot D) \cdot 0.86 \text{ կգ (3)}$$

Որտեղ՝

M_H - վառելիքի ծախսն է, լ կամ կգ,

H_{sc} - վազքի վառելիքի ծախսի նորման է, լ/100 կմ,

S - տրանսպորտային միջոցի ընդհանուր վազքն է նախատեսվող գործունեության կամ միջոցատման ընթացքում, կմ,

H_T - տրանսպորտային միջոցի կամ տեխնիկայի կողմից իրականացվող տեխնոլոգիական օպերացիայի կամ միջոցատման (օրինակ, ավտոկոունկով բեռի բարձրացում, էքսկավատորով փորում և այլն) վրա վառելիքի ծախսի նորման է, լ/ժամ,

T - տրանսպորտային միջոցով կամ շինարարական տեխնիկայով իրականացվող տեխնոլոգիական օպերացիայի կամ միջոցատման վրա ծախսվող աշխատաժամանակն է, ժամ,

D - նորմայի գումարային հարաբերական ավելացումն է՝ %-ով (կիրառվում է տարվա ցուրտ ժամանակաշրջանում, ինչպես նաև լեռնային տեղանքում աշխատելիս):

Տրանսպորտային միջոցների և շինարարական տեխնիկայի գազանման արտանետումների հաշվարկի մեթոդակարգը

Տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկան աշխատում են դիզելային վառելիքով, որի այրումից արտանետումները հաշվարկվում են ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից մշակված Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման մեթոդական հրահանգի⁴ հիման վրա: Վառելիքի այրումից արտանետվող վնասակար նյութերն են՝ NO_x , CH , CO , N_2O , CO_2 , SOU , $ՊU$, SO_2 :

4 Մեթոդիկայում ընդունված է տրանսպորտային միջոցների դասակարգումը "Core Inventory of Emissions in Europe" (այսուհետ՝ CORINAIR)՝ "Եվրոպայում մթնոլորտային արտանետումների բազային գույքագրում" մեթոդոլոգիային համապատասխան

Յուրաքանչյուր վնասակար նյութի (բացառությամբ SO_2 -ի) արտանետումը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{N.k1.k2.MH}{10^6}, \text{ տ}$$

Որտեղ՝

Q - շահագործվող տրանսպորտային միջոցի կամ շինարարական տեխնիկայի գազանման արտանետումներում վնասակար նյութերի (բացառությամբ SO_2 -ի) քանակությունն է տեխնոլոգիական օպերացիայի/միջոցատման ժամանակահատվածի կտրվածքով,

N- ըստ նշված մեթոդակարգի ծանր ավտոտրանսպորտի և տեխնիկայի տեսակարար արտանետման մեծությունն է, որը տարբեր վնասակար նյութերի համար բերված է Աղյուսակում:

Տեսակարար արտանետումներ (գ/կգ վառելիք)

Վառելիքի տեսակ	Նյութերի անվանումը						
	CO	CH	NOx	ՊՄ	N ₂ O	ՑՕՍ	CO ₂
Դիզելային վառելիք	36,4	0,243	42,3	4,3	0,122	8,16	3138

k1-ը և k2-ը վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցներն են կախված տրանսպորտային պարկի միջին տարիքից և տեխնիկական վիճակից: Դրանց արժեքները բերված են ստոն Աղյուսակում:

Վնասակար նյութերի արտանետումների ճշգրտման գործակիցները

Ավտոմեքենայի կատեգորիան	Վնասակար նյութը	Ազդեցության գործակիցը	
		միջոցի միջին տարիքի (k1)	տեխնիկական վիճակի (k2)
Մեծ բեռնունակության ավտոտրանսպորտ	CO	1.33	1.8
	CH	1.2	2.0
	NOx	1.0	1.0
	ՊՄ	1.0	1.0
	N ₂ O	1.0	1.0
	ՑՕՍ	1.0	1.0
	CO ₂	1.0	1.0

Ածխածնի օքսիդի (CO), ածխաջրածինների (CH) և ազոտի օքսիդների (NOx) գործակիցները վերցված են Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներից (Մոսկվա, Հիդրոմետհրատ - 1983), իսկ ածխածնի երկօքսիդի (CO₂) և ազոտի ենթօքսիդի (N₂O) գործակիցները ընդունվել են 1, քանի որ դրանց համար գործակիցներ սահմանված չեն:

Ծմբային անհիդրիդի (SO₂) արտանետումները հաշվարկվում են ելնելով այն մոտեցումից, որ վառելիքում պարունակվող ամբողջ ծծումբը լիովին վերածվում է SO₂-ի: Այդ դեպքում կիրառվում է CORINAIR գույքագրման համակարգի բանաձևը.

$$ES_{SO_2} = 2 \cdot \sum ks \cdot M_H, \text{ կգ (5)}$$

Որտեղ`

ks - վառելիքում ծծմբի պարունակություն, կգ/կգ,

ՄԻ - վառելիքի ծախս, կգ:

3.1 Ռիսկերի գնահատման մեթոդակարգը

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- Քանդման, բեռնման աշխատանքների,
- գրունտային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հաշվետվությունում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

Նախատեսվող գործունեության հետևանքով առաջացած ռիսկերի գնահատումը իրականացվում է Ասիական Զարգացման Բանկի կողմից մշակված՝ ռիսկերի գնահատման մեթոդակարգի համաձայն:

Ըստ այդ մեթոդակարգի՝ սոցիալական և շրջակա միջավայրի վրա ռիսկերի ազդեցության գնահատումը իրականացվում է երկու հարաչափերի արտադրյալի միջոցով, որի արդյունքում որոշվում է ռիսկի ազդեցության աստիճանը: Այդ հարաչափերն են՝

- 1) հավանականություն
- 2) հետևանք

Հարաչափերը գնահատվում են 1, 2, 3, 5 գնահատականներով: Բազմապատկման արդյունքում ստացված թիվը բնութագրում է ռիսկի աստիճանը՝

- 15-25 (բարձր աստիճանի ռիսկ)
- 6-10 (միջին աստիճանի ռիսկ)
- ≤ 5 (ցածր աստիճանի ռիսկ):

Մթնոլորտ վնասակար արտանետումների հաշվարկը

Բեռնատար մեքենա

Հաշվարկվում է բեռնատար մեքենայի երթերի քանակը ելնելով դրա թափքի տարողունակությունից և տեղափոխման ենթակա նյութերի ծավալից.

Բեռնատար մեքենայի երթերի թվի հաշվարկը

N	Նյութերի անվանումը	ճավալը, մ ³	Թափքի տարողությունը, մ ³	Բարձրան գործակից	Երթերի քանակը
1.	Խիճ, ամրանային ցանց, մետաղական կոնստրուկցիաներ և այլ նյութեր	-	11	0.8	16
Ընդամենը					16

Յուրաքանչյուր երթի երկարությունը 8 կմ է (Տաշիր համայնքի մասնագիտացված շինարարական բազայից դեպի Նախատեսվող գործունեության վայր և հակառակը): Արդյունքում, ինքնաթափ մեքենան պետք է անցնի 128 կմ:

2) Վառելիքի ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$M = (0,01 \cdot H_{sc} \cdot S + H_T \cdot T) \cdot (1 + 0,01 \cdot D), \text{ և}$$

Որտեղ`

$$H_{sc} = 32.2 \text{ և/100 կմ,}$$

$$S = 128 \text{ կմ, } H_T = 0 \text{ և/ժամ,}$$

$$T = 8 \text{ ժամ,}$$

$$D = 15\%:$$

$$\text{Այսպիսով } M_{sc} = 47.398 \text{ և կամ } 47.398 \cdot 0.86 = 40.763 \text{ կգ:}$$

3) Գազանման արտանետումները` որոշված (4) բանաձևով, բերված են Աղյուսակում

Ավտոմեքենաների կատեգորիա	Վնասակար նյութեր	Արտանետումներ	
		գ/լ	տ/միջոցառման ժամանակահատված
Բեռատար մեքենա	CO	0,1233	0,0036
	CH	0,0008	0,00002
	NO _x	0,0599	0,0017
	ՊՄ	0,0061	0,0002
	N ₂ O	0,0002	0,000005
	SO ₂	0,0115	0,0003

SO₂ -ի արտանետումները որոշվում են հետևյալ բանաձևով.

$$ESO2 = 2 \cdot \sum ks \cdot MH, \text{ կգ}$$

Որտեղ՝ $ks=0.002$ կգ/կգ, $M_{HF}=40.763$ կգ:

Այսպիսով՝

$$ESO2 = 0.16 \text{ կգ (0.00016 տ/միջոցառման ժամանակահատված) կամ} \\ (0.00016 \cdot 106) / (8 \cdot 3600) = 0.0057 \text{ գ/վ:}$$

III և VIII միջոցառումներ՝ հողային աշխատանքներ Էքսկավատոր-բարձիչ

1) Անօրգանական փոշու արտանետումները որոշվում են հետևյալ բանաձևով.

$$Q = K1 \cdot K2 \cdot K3 \cdot K4 \cdot K5 \cdot K7 \cdot K8 \cdot B \cdot G, \text{ տ/միջոցառման ժամանակահատված,}$$

Որտեղ՝

$$K1=0.05, K2=0.02, K3=1.2, K4=1, K5=0.1, K7=0.5, K8=1, B=0.7:$$

Հողային աշխատանքների ծավալը 740մ^3 է կամ 1480 տ: Հետևաբար, $G=1480$ տ, իսկ $Q_f = 0.0621$ տ/միջոցառման ժամանակահատված կամ

$$(0.0621 \cdot 106) / (80 \cdot 3600) = 0.216 \text{ գ/վ,}$$

Որտեղ՝

80-ը էքսկավատոր-բարձիչի աշխատաժամերի քանակն է:

2) Վառելիքի ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$M = (0,01 \cdot HSC \cdot S + HT \cdot T) \cdot (1 + 0,01 \cdot D), \text{ Լ}$$

Որտեղ՝

$$HE = 40 \text{ Լ/100կմ, } S=64 \text{ կմ, } HT=5.3 \text{ Լ/ժամ, } T=80 \text{ ժամ, } D=15\%:$$

Այսպիսով՝

$$ME = 517 \text{ Լ կամ}$$

$$517 \cdot 0.86 = 445 \text{ կգ}$$

3) Գազանման արտանետումները՝ որոշված (4) բանաձևով, բերված են Աղյուսակում

Ավտոմեքենաների կատեգորիա	Վնասակար նյութեր	Արտանետումներ	
		գ/վ	տ/միջոցառման ժամանակահատված
	CO	0.1345	0.0387
	CH	0.0009	0.00026
	NO _x	0.0653	0.0188
	ՊՄ	0.0066	0.0019
	N ₂ O	0.0002	0.000054
	ՅՕՄ	0.0126	0.0036

SO₂-ի արտանետումները որոշվում են հետևյալ բանաձևով.

$$ESO_2 = 2 \cdot \sum ks \cdot M_H, \text{ կգ}$$

Որտեղ՝

$$ks = 0.002 \text{ կգ/կգ}, M_{H_2} = 445 \text{ կգ}$$

Այսպիսով՝

$$ESO_2 = 1.78 \text{ կգ (0.00178տ/միջոցառման ժամանակահատված) կամ (0.00178 \cdot 10^6)/(80 \cdot 3600) = 0.0062 \text{ գ/վ}}$$

**VI և IX միջոցառումներ՝ բեռոնե խառնուրդի տեղափոխման աշխատանքներ
Բեռոնախառնիչ մեքենա**

1) Հաշվարկվում է բեռոնախառնիչ մեքենայի երթերի քանակը ելնելով դրա թափքի տարողունակությունից և տեղափոխման ենթակա նյութերի ծավալից.

Բեռոնախառնիչ մեքենայի երթերի թվի հաշվարկը

N	Նյութերի անվանումը	Ծավալը, մ ³	Թափքի տարողությունը, մ ³	Բարձրագույն գործակիցը	Երթերի քանակը
1.	Բեռոնե խառնուրդ	-	7	-	13
Ընդամենը					13

1) Վառելիքի ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$M = (0,01 \cdot HSC \cdot S + HT \cdot T) \cdot (1 + 0,01 \cdot D), \text{ Լ}$$

Որտեղ՝

$$H_{FIV} = 29,4 \text{ Լ/100կմ}, S = 78 \text{ կմ}, HT = 4 \text{ Լ/ժամ}, T = 40 \text{ ժամ}, D = 15\%:$$

$$\text{Այսպիսով՝ } M_{FIV} = 210 \text{ Լ կամ } 210 \cdot 0,86 = 181 \text{ կգ}$$

2) Գազանման արտանետումները՝ որոշված (4) բանաձևով, բերված են Աղյուսակում

Բետոնախառնիչ մեքենայի գազանման արտանետումները

Ավտոմեքենաների կատեգորիա	Վնասակար նյութեր	Արտանետումներ	
		գ/վ	տ/միջոցառման ժամանակահատված
Բեռնատար մեքենա	CO	0.1095	0.0158
	CH	0,0007	0,00011
	NO _x	0,0531	0,0077
	ՊՍ	0,0054	0,0008
	N ₂ O	0,0002	0,000022
	ՑՕՍ	0,0103	0,0015

SO₂ -ի արտանետումները որոշվում են հետևյալ բանաձևով.

$$ESO_2 = 2 \cdot \sum ks \cdot MH, \text{ կգ}$$

Որտեղ՝ $ks=0.002$ կգ/կգ, $M_{H_2}=181$ կգ:

Այսպիսով՝ $ESO_2 = 0.72$ կգ (0.00072 տ/միջոցառման ժամանակահատված) կամ $(0.00072 \cdot 10^6) / (40 \cdot 3600) = 0.005$ գ/վ:

Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների վերլուծությունը և գնահատումը

Մթնոլորտ արտանետումների հաշվարկների արդյունքները, ամփոփված ըստ յուրաքանչյուր վնասակար նյութի, բերված են Աղյուսակում:

Վնասակար նյութերի արտանետումները

№	Արտանետման աղբյուրը	Վնասակար նյութերի արտանետումները	
		գ/վ	տ/ժամանակ-ած
1. Փոշի			
	Էքսկավատոր-բարձիչ (III, VIII)	0.216	0.0621
Ընդամենը		0.216	0.0621

2. CO			
	Էթսկավատոր-բարձիչ (III, VIII)	0.1345	0.0387
	Բեռնատար մեքենա (II, IV)	0.1233	0.0036
	Բետոնախառնիչ (VI, IX)	0.1095	0.0158
Ընդամենը		0,3673	0,0581
3. CH			
	Էթսկավատոր-բարձիչ (III, VIII)	0.0009	0.00026
	Բեռնատար մեքենա (II, IV)	0.0008	0.00002
	Բետոնախառնիչ (VI, IX))	0.0007	0.00011
Ընդամենը		0,0024	0,00057
4. NOx			
	Էթսկավատոր-բարձիչ (III, VIII)	0.0653	0.0188
	Բեռնատար մեքենա (II, IV)	0.0599	0.0017
	Բետոնախառնիչ (VI, IX)	0.0531	0.0077
Ընդամենը		0,1783	0,0282
5. ՊՄ			
	Էթսկավատոր-բարձիչ (III, VIII)	0.0066	0.0019
	Բեռնատար մեքենա (II, IV)	0.0061	0.0002
	Բետոնախառնիչ (VI, IX)	0.0054	0.0008
Ընդամենը		0,0181	0,0029
6. N₂O			
	Էթսկավատոր-բարձիչ (III, VIII)	0.00019	0.000054
	Բեռնատար մեքենա (II, IV)	0.00017	0.000005
	Բետոնախառնիչ (VI, IX)	0.00015	0.000022
Ընդամենը		0,00051	0,000081
7. SO₂			
	Էթսկավատոր-բարձիչ (III, VIII)	0.0126	0.0036

	Բեռնատար մեքենա (II, IV)	0.0115	0.0003
	Բետոնախառնիչ (VI, IX)	0.0103	0.0015
Ընդամենը		0,0344	0,0054
8. SO₂			
	Էքսկավատոր-բարձիչ (III, VIII)	0.0062	0.00178
	Բեռնատար մեքենա (II, IV)	0.0057	0.00016
	Բետոնախառնիչ (VI, IX)	0.005	0.00072
Ընդամենը		0,0169	0,00266

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտ վնասակար նյութերի գումարային արտանետումները Թափոնների տեղադրման տեղամասի կառուցման ժամանակահատվածում տարբեր միջոցառումների/գործողությունների իրականացման ընթացքում վնասակար նյութերի գումարային արտանետումները բերված են ստորև Աղյուսակում:

Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը նախատեսվող գործունեության իրականացման ժամանակահատվածում

Նախատեսվող գործունեության փուլերը		Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը					
		Փոշի	Ածխածնի օքսիդ	Ազոտի օքսիդներ	CH+N ₂ O+3OU (այսուհետ CH)	ՊՄ	SO ₂
Տեղամասի կառուցում	տ/ժամանակ-ած	0.0621	0,3673	0,0282	0.006051	0,0029	0,00266
	գ/վ	0.216	0,0581	0,1783	0.03731	0,0181	0,0169
Ընդամենը	տ/ժամանակ-ած	0.0621	0,3673	0,0282	0.006051	0,0029	0,00266
	առավելագույն գ/վ	0.216	0,0581	0,1783	0.03731	0,0181	0,0169

Աղյուսակում բերված մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումները և նախատեսվող գործունեության իրականացման ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ մթնոլորտային արտանետումները չնչին են (նախատեսվող գործունեության տեղամասի կառուցման ժամանակահատվածում վնասակար նյութերի արտանետումների գումարային ծավալը կկազմի 0.4692տ կամ մոտ 469.2կգ): Մթնոլորտային օդի վրա ազդեցության ռիսկի գնահատումը ներկայացված է ստորև բաժնում:

Մթնոլորտային օդի վրա ազդեցությունը

Ընկերության կողմից հայցվող տարածքի կառուցապատման ծրագրի իրականացման փուլում մթնոլորտային արտանետումները հիմնականում շարժական աղբյուրներից (mobile polluter) են, իսկ արտանետումների տեսակը մերձգետնյա է (արտանետման աղբյուրի բարձությունը չի գերազանցում 2,0մ-ը), այսինքն այն չի կարող ցրվել համեմատաբար մեծ հեռավորությունների վրա: Հաշվի առնելով նաև հողային աշխատանքների տևողությունը (աշխատանքներ մոտ 120 օր), ինչպես նաև ձեռնարկվող մեղմացման միջոցառումները ակնհայտ է, որ կառուցապատման փուլում կանխատեսվող արտանետումները չեն ազդի մոտակա բնակավայրերի մթնոլորտային օդի որակի վրա:

Նախատեսվող գործունեության ընթացքում օգտագործվող տեխնիկայի վերանորոգման և տեխնիկական սպասարկյան գործընթացը նախատեսվում է իրականացնել համապատասխան իրավասություններ ունեցող կազմակերպությունների տարածքում և վերջինիս օգտագործումը զգալի կերպով նվազեցնում է օդի աղտոտվածությունը՝ բացառելով տեղում իրականացվող աշխատանքների ընթացքում փոշու առաջացումը:

Նախատեսվող գործունեության տարածքում մթնոլորտային արտանետումներն առաջանալու են միայն շարժական աղբյուրներից՝ շին.տեխնիկայից, որոնք օգտագործվելու են գրունտների և շին ապրանքների տեղափոխման ժամանակ: Հարկ է նշել, որ շինարարության փուլում կանխատեսվող արտանետումները չնչին են և չեն կարող մթնոլորտային օդի որակի վատթարացման պատճառ հանդիսանալ: Հետևաբար, կարելի է փաստել, որ տարածքի շինարարության ընթացքում օդի աղտոտվածություն չի սպասվում:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցության գնահատման արդյունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումներն ամփոփված են ստորև Աղյուսակում:

**Մթնոլորտային օդի վրա ազդեցության ռիսկի գնահատման արդյունքները,
առաջարկվող մեղմացնող և կանխարգելիչ միջոցառումները**

Մթնոլորտային օդ					
Հավանականություն (A)	Հետևանք (B)	Ազդեցության գնահատում (A) * (B)	Ազդեցության աստիճան	Ազդեցության մեղմացմանը և կանխարգելմանը միտված միջոցառումներ	Փուլերում կիրառելիությունը
5	1	5	ցածր	Շինարարական տեխնիկայի կանոնավոր ստուգում և տեխնիկական սպասարկում	Շինարարության փուլում
				Ահնրաժեշտության դեպքում շին.հրապարակի պարբերաբար ջրում	Շինարարության փուլում
				Տեղանքում շինարարական նյութերի և թափոնի բաց այրման արգելում է	Շինարարության փուլում
				Օդերևութաբանական անբարենպաստ պայմանների դեպքում շինարարական աշխատանքների դադարեցում	Շինարարության փուլում

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ քանդման /միայն գոմաղբի կուտակման և սեպտիկ հորի տարածքում/ ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

3.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը ադոտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- Ահնրաժեշտության դեպքում շին.հրապարակի պարբերաբար ջրում,
- Տեղանքում շինարարական նյութերի և թափոնի բաց այրման արգելում է,
- Օդերևութաբանական անբարենպաստ պայմանների դեպքում շինարարական աշխատանքների դադարեցում:

3.3.2 Ջրային ռեսուրսներ

Խմելու ջուրը բերվելու է նախատեսվող գործունեության տարածքին հարող բանավանից Դը-1.2 կցովի ցիստերնով՝ օրենքով սահմանված կարգով, համապատասխան պայմանագրի առկայությանդեպքում:

Տեխնիկական ջուրը նախատեսվում է բերել KAMA3-5320Լ ջրցան ավտոմեքենայով: Խմելու ջրի որակը պետք է համապատասխանի ՍանԿնՆ 2-III-Ա2-1-02 պահանջներին:

Խմելու ջրի ծախսը մեկ մարդու համար ընդունված է 8լ/օր, տեխնիկական ջրի օրեկան ծախսը 1.5լ/մ² ավտոճանապարհների և արտհրապարակների ջրցանման համար:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- նախատեսվում է սեպտիկ հոր, տարողությունը 35,6լամ, որը հետագայում պարբերաբար մաքրվելու է հատուկ ծառայության միջոցով պայմանագրային հիմունքներով:

Ջրային ռեսուրսների վրա ազդեցության ռիսկի գնահատման արդյունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները

Ջրային ռեսուրսներ					
Հավանականություն (A)	Հետևանք (B)	Ազդեցության և գնահատում (A) * (B)	Ազդեցության աստիճան	Ազդեցության մեղմացմանը և կանխարգելմանը միտված միջոցառումներ	Փուլերում կիրառելիությունը

1	1	1	ցածր	Օդերևութաբանական անբարենպաստ պայմանների դեպքում շինարարական աշխատանքների դադարեցում	Շինարարության փուլում
---	---	---	------	---	-----------------------

3.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահեցնուսավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով (ամսեկան մեկ անգամ):
- Արգելվում է ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում.
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինարարական թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ հողային ռեսուրսների վրա ազդեցության գնահատման արդյունքները ամփոփված են ստորև Աղյուսակում: Նախատեսվող գործունեության տեղամասի կառուցապատման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի սպասվում:

**Հողային ռեսուրսների վրա ազդեցության ռիսկի գնահատման արդյունքները փ
առաջարկվող մեղմացնող միջոցառումները**

Հողային ռեսուրսներ					
Հավանակա նություն (A)	Հետևանք (B)	Ազդեցությա ն գնահատում (A) * (B)	Ազդեցության աստիճան	Ազդեցության մեղմացմանը և կանխարգելմանը միտված միջոցառումներ	Փուլերում կիրառելիություն ը
5	1	5	ցածր	Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված հողի բերրի շերտի օգտագործման կարգով	Շինարարության փուլում
				Աշխատանքների ավարտից հետո տարածքի հարթեցում և բարեկարգում	Շինարարության փուլում
				Յուղի արտահոսքի արդյունքում հողի աղտոտումից խուսափելու համար շինարարական մեքենաների տեխ. սպասարկումը իրականացնել մասնագիտացված սպասարկման կետերում	Շինարարության փուլում

3.3.4 Թափոնների կառավարում

Շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- *Շինարարական թափոններ`* (ծածկագիր` **91200601 01 00 4**, վտանգավորության 4-րդ դաս)` մոտ 0,5մ³, (հիմնականում կազմված են իներտ ֆրակցիաներից) ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

- *Կենցաղային աղբ`* Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի/

(ծածկագիր՝ **91200400 01 00 4**, վտանգավորության 4-րդ դաս), մեկ մարդու հաշվարկով կենցաղային աղբի առաջացման նորմը կազմում է 0,32խմ 1 տարում:

Շինարարության փուլում առաջացող կենցաղային աղբի ծավալը կկազմի $16 \cdot 0,32 = 1,92$ խմ, քանի որ շինարարության փուլում աշխատողները 6-ն են, իսկ շահագործման փուլում 78, $78 \cdot 0,32 = 24,96$ խմ/տարեկան/:

Շինարարության փուլում առաջացող շինաղբը կպահվի համապատասխան պարկերով, ծածկի տակ, մինչև տեղափոխումը համայնքի կողմից տրամադրված աղբավայր, տեղափոխումը կիրականացվի ըստ անհրաժեշտության:

Այն թափոնները, որոնք հնարավոր կլինի խառնել կենցաղային աղբի հետ(կեղտոտված լաթեր և այլն) կտեղափոխվեն աղբավայր: Շինարարության փուլում այլ տեսակի թափոնների կուտակում չի նախատեսվում:

Տարածքում աղբահանության նպատակով տեղադրվելու են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Համաձայն ՀՀ Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման տեխնիկական բնութագրերի տարածքը անհրաժեշտ է կահավորել աղբամաններով՝ 1 աղբանոթ հաշվարկով, ինչը լիովին ապահովված է ընկերության կողմից: Աղբահեռացումը կատարվելու է կանոնավոր:

Մեքենաների սպասարկումը նախատեսվում է իրականացնել տեխ սպասարկման կայաններում, տարածքում որևէ նորոգման, յուղի փոխարինման և այլ աշխատանքներ չեն իրականացվելու:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսվում է գոյացող, օգտագործվող, այլ անձանց կամ լիցենզավորված կազմակերպության փոխանցվող, ինչպես նաև տեղադրվող թափոնների սկզբնական հաշվառում:

3.3.5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Աշխատողների վնասվածքները

Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ուր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկողիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի

մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.6 Հակահրդեհային միջոցառումներ

- ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջոցառումների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջոցառումները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- բ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

Շինհրապարակը համալրված է հակահրդեհային սարքավորումներով, լուսարձակներով: Շինարարական աշխատանքները նախատեսվում են իրականացնել նախագիծը կազմելուց հետո, որտեղ ըստ ՇՄՈ 111-4-80-ի պահանջների պետք է նշվեն անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման ցուցմունքները նշված պայմաններում աշխատելու ժամանակ:

Արտակարգ իրավիճակների առաջացման ռիսկի գնահատման արդյունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները

Արտակարգ իրավիճակներ					
Հավանականություն (A)	Հետևանք (B)	Ազդեցության զնահատում (A) * (B)	Ազդեցության աստիճան	Ազդեցության մեղմացմանը նկանխարգելմանը միտված միջոցառումներ	Փուլերում կիրառելիությունը
1	5	5	ցածր	Շինարարական մեքենաների շահագործման պատշաճ կառավարում	Շինարարության փուլում
				Համայնքում բուժկենտրոնների նույնականացում՝ վնասվածք ստացած աշխատողներին հրատապ բուժօգնություն ցուցաբերելու համար	Շինարարության փուլում
				Վարորդների առողջության բուժ. զննում	Շինարարության փուլում
				Յուղի արտահոսքից խուսափելու համար շինարարական մեքենաների տեխ. սպասարկումը իրականացնել մասնագիտացված սպասարկման կետերում	Շինարարության փուլում

				Մինչ աշխատանքների մեկնարկը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, աշխատող անձնակազմը անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատաթևի ղեկավարը	Շինարարության փուլում
--	--	--	--	---	--------------------------

3.3.7 Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ հանդիսանում է գյուղը, որը գտնվում է տարածքից զգալի հեռավորության վրա:

Քանի որ մոտակա գյուղը գտնվում է աղմուկի աղբյուրից բավականին հեռու, ապա աղմուկի մակարդակը հաշվարկվում է սահմանին (հեռավորությունը աղմուկի աղբյուրից 500մ):

Տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը LAէկվ սահմանված է 79ԴԲԱ (համաձայն գործող նորմերի):

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - LA_{հեռ} - LA_{էկր} - LA_{կանաչ}$$

Որտեղ՝

LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=79ԴԲԱ

LAհեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված

LAհեռ 500մ-ի վրա կազմում է 28ԴԲԱ

LAէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով:

□LAէկր =14դԲԱ

Տարածքը տվյալ դեպքում ծառայում է որպես էկրան:

LAկանաչ- աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով,

LAկանաչ=0դԲԱ

Աղմուկի մակարդակը գոտու սահմանին կկազմի՝

LAտար =LAէկվ-LAհեռ-LAէկր-LAկանաչ=79-28-14=37դԲԱ

Հաշվի առնելով հեռավորությունը մոտակա բնակավայրերից, ռելիեֆը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45ԴԲԱ/ շատ ցածր:

Աղմուկի մակարդակը գիշերային ժամերին գտնվում է նորմերի սահմաններում և կազմում է 32դԲԱ (նորման 35դԲԱ):

Ինչ վերաբերվում է առաջացող թրթռումներին, ապա դրանք կարող են ազդել միայն բանվորական անձնակազմի վրա՝ բավականին կարճ ճամանակահատվածում և չեն կարող էական բացասական ազդեցություն թողնել նրանց կյանքի և առողջության վրա:

Աղմուկի և թրթռման առաջացման ազդեցության ռիսկի գնահատման արդյունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները

Աղմուկ և թրթռում					
Հավանակա նություն (A)	Հետևանք (B)	Ազդեցության գնահատում (A) * (B)	Ազդեցության ն աստիճան	Ազդեցության մեղմացմանը և կանխարգելմանը միտված միջոցառումներ	Փուլերում կիրառելիությունը
5	1	5	ցածր	Շինարարական տեխնիկայի կանոնավոր ստուգում և տեխնիկական սպասարկում	Շինարարության փուլում
				Աշխատողների համար աղմուկի մակարդակը պետք է պահպանվի 80 dB (A)-ից ցածր: Այս արժեքը գերազանցելու դեպքում աշխատողներին պետք է տրամադրվեն հատուկ պաշտպանիչ ականջակալներ	Շինարարության փուլում

3.3.8 Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր

Նախատեսվող շինարարության հարակից տարածքները բավականին ուրբանիզացված են: Տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել: Այդուամենայնիվ, շինարարական աշխատանքների ժամանակ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է.

- 1) Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով, առանձնացնել պահպանվող գոտիներ:
- 2) Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, երե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացման ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը, տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով: Աշխատանքները կիրականացվեն ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանող որոշման (31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն) հիմնադրություններին համապատասխան:
- 3) Շինարարական և հողային աշխատանքներ իրականացնելու ժամանակ օգտագործվելու է ջրցան՝ փոշենստեցման նպատակով, ինչը աղտոտումից կպահպանի օդային ավազանը և բնական էկոհամակարգերը, մասնավորապես տեղի բուսականությունը:
- 4) Որպես կանոն կենդանիները ակտիվ են վաղ առավոտյան և իրիկնամուտին, իսկ որոշ տեսակներ ակտիվ են բացառապես գիշերային ժամերին: Որոշ կենդանատեսակներ շատ զգայուն են աղմուկի նկատմամբ, ուստի կենդանիների կեսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար նախատեսվում ցանկացած աղուկ առաջացնող գործողություն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին (շինարարական աշխատանքներ, տրանսպորտի տեղաշարժ և այլն):
- 5)** Կենդանիների բնականոն վարքին կարող է խանգարել նաև տարածքի գիշերային լուսավորությունը, մասնավորապես այն տեսակների, որոնք ակտիվ են գիշերը, լուսադեմին կամ մթնշաղին: Ուստի նախատեսվում մաքսիմալ նվազեցնել տարածքի լուսավորությունը:
- 6) Համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

7) Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ընկերությունը կառաջնորդվի Առողջապահության նախարարի՝ 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, հրամանի պահանջներով, և աշխատողները պետք է տեղեկացված լինեն սանիտարակենցաղային պայմանների վերաբերյալ կետերին:

Այնուամենայնիվ՝ մինչ ուսումնասիրության աշխատանքների մեկնարկը տարածքում առկա կենդանական աշխարհի ներկայացուցիչները կհասցնեն վերաբնակվել հարևան տարածքներում և չեն ենթարկվի ազդեցության նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում: Նախատեսվող գործունեության՝ կենսաբազմազանության վրա ազդեցության գնահատման արդյունքները ամփոփված են ստորև Աղյուսակում: Կառուցապատման փուլում կենսաբազմազանության վրա ազդեցություն չի ակնկալվում:

Կենսաբազմազանության վրա ազդեցության ռիսկի գնահատման արդյունքները 7 առաջարկվող մեղմացնող միջոցառումները

Կենսաբազմազանություն					
Հավանակա նություն (A)	Հետևանք (B)	Ազդեցության գնահատում (A) * (B)	Ազդեցության աստիճան	Ազդեցության մեղմացմանը և կանխարգելմանը միտված միջոցառումներ	Փուլերում կիրառելիությունը
5	1	5	ցածր	Անհարժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որաշման դրույթների վրա	Շինարարության փուլում
				Աշխատանքների իրականացման ընթացքում չօգտագործել	Շինարարության փուլում

				արգելված թունաքիմիկատներ	
				Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ շրջայց Նախատեսվող գործունեության տարածքում՝ առկա բուսատեսակների բացահայտման նպատակով	Շինարարության փուլում

Սոցիալական ազդեցությունները

Սոցիալական ազդեցության տեսանկյունից նախատեսվող գործունեությունը միանշանակ դրական է: Ինչպես նշվել է, «Տաշիր Ագրո» ՓԲ ընկերությունը ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Բլագոդարնոյե բնակավայրի վարչական տարածքում, գործունեության իրականացման ընթացքում, համայնքը հնարավորություն է ստանում մասնակի բարելավել բնակիչների սոցալ-տնտեսական վիճակը՝ գործունեության ժամանակահատվածում աշխատատեղերի բացման հետևանքով: Բացի այդ Ընկերությունը՝ իր հնարավորությունների սահմանում, սերտ համամագործակցություն կսկսի համայնքի սոցալական ծրագրերի և կարիքների բավարարման գործընթացում: Որոշակի աշխուժություն կնկատվի նաև սպասարկման և առևտրի ոլորտներում:

Ենթակառուցվածքների վրա ազդեցությունը

Նախատեսվող գործունեության գծային ենթակառուցվածքները դրանք՝ գոյություն ունեցող օդային գիծը, Մ2 ավտոճանապարհը և միջհամայնքային՝ նաև նախատեսվող գործունեության վայր տանող գրունտային ճանապարհը: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հնարավոր է մի փոքր ծանրաբեռնվի հիմնականում նախատեսվող գործունեության վայր տանող մուտքի ճանապարհները, սակայն դա խոչընդոտ չի հանդիսանա մուտքի ճանապարհով երթևեկելու համար:

Ազդեցություններ զգայուն կյանհիշների վրա

Ինչպես արդեն նշվել է՝ նախատեսվող գործունեության վայրին մոտ բնակելի տներ չկան: Մոտակա բնակելի գոտին գտնվում է նախատեսվող գործունեության վայրից մոտ 1,5-ից 2,0կմ հեռավորության վրա, ուստի այն չի կարող ազդվել աշխատանքների իրականացման արդյունքում: Այնուամենայնիվ բնակելի գոտու վրա միակ հավանական ազդեցությունը՝ որը կարող է առաջանալ նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում, դա աղմուկի արձակումն է (մեքենաների շարժի հետևանքով):

Հուշարձանների վրա ազդեցությունը և պատահական գտածոներ

Նախատեսվող գործունեության համար իրականացվող հողային աշխատանքների ժամանակ պատահական գտածոներ հայտնաբերելու դեպքում, աշխատանքները պետք է դադարեցվեն: Գտածոյի վերյաբերյալ տեղեկատվությունը պետք է տրամադրվի մշակութային ժառանգության պահպանման համար պատասխանատու մարմիններին: Շինարարական աշխատանքները պետք է շարունակվեն պատասխանատու մարմինների կողմից պաշտոնական թույլտվություն ստանալուց հետո: Նախատեսվող գործունեության՝ հուշարձանների վրա ազդեցության գնահատման արդյունքները ամփոփված են ստորև Աղյուսակում: Նախատեսվող գործունեության վայրին մոտ պատմամշակութային հուշարձաններ չկան, ուստի հայցվող տեղամասի շահագործման փուլում պատմամշակութային հուշարձանների վրա ազդեցություն չի սպասվում:

Հուշարձանների վրա և պատահական գտածոների հայտնաբերման ռիսկի գնահատման արդյունքները և առաջարկվող մեղմացնող միջոցառումները

Հուշարձաններ և պատահական գտածոներ					
Հավանակա նություն (A)	Հետևանք (B)	Ազդեցության գնահատում (A) * (B)	Ազդեցության աստիճան	Ազդեցության մեղմացմանը և կանխարգելմանը միտված միջոցառումներ	Փուլերում կիրառելիությունը

1	5	5	ցածր	Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ պատահական գտածոների հայտնաբերման դեպքում աշխատանքները պետք է դադարեցվեն	Շինարարության փուլում
				Պատահական գտածոների հայտնաբերման դեպքում դրա մասին տեղեկացնել մշակութային ժառանգության պահպանման համար պատասխանատու մարմիններին	Շինարարության փուլում
				Շինարարական աշխատանքները պետք է շարունակվեն վերոնշյալ մարմիններից	Շինարարության փուլում

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հենյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ /30000 ՀՀ դրամ/
2. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ /25000 ՀՀ դրամ/

3. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ /15000 ՀՀ դրամ/

Մշտադիտարկումների միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 70000 ՀՀ դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներն աշխատողների անվտանգություն	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համարՆշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:</p>
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում

		(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	<p>(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>(b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>(e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել</p>
Հողային ռեսուրսներ	Հողի որակ	<p>(f) Շին. աշխատանքների ընթացքում իրականացնել հողերի որակի մոնիթորինգ</p> <p>(g) Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,</p> <p>(h) Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահեստավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն:</p> <ul style="list-style-type: none"> - Արգելվում է ընդհանուր օգտագործման ճանապարհներից և ջրային ուղիներից դուրս շարժիչային և թրթուրավոր տրանսպորտային միջոցների երթևեկությունը և կանգառը ճանապարհային ցանցի սահմաններից դուրս կամ դրա համար չնախատեսված վայրերում. <p>(i) Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ</p>

		<p>տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:</p> <p>(j) Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավագը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով (ամսեկան մեկանգամ):</p> <p>(k) աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինարարական թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,</p> <p>(l) տարածքը կբարեկարգվի:</p>
<p>Կեղտաջրերի հեռացում</p>	<p>Ջրի որակ Սեպտիկ հոր</p>	<p>Կեղտաջրերի հեռացում դեպի ջրավազաններ նախատեսված չեն, այլ լուծումը տրված է անջրաթափանց, սեպտիկ հորի միջոցով, որը պարբերաբեր դատարկվելու է պայմանագրային հիմունքներով՝ աստենիզացոն մեքենայի միջոցով:</p>
<p>Հետիոտների և երթևեկության ապահովություն</p>	<p>Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ</p>	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների

		<p>համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում:</p> <ul style="list-style-type: none"> ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված ներկացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:
Արտակարգ իրավիճակներ	Հնարավոր վտանգներ	<p>(c) Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:</p> <p>(d) Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիչով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:</p> <p>(e) Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:</p> <p>(f) Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնություն, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:</p>

<p>Կենսաբազմազանության մոնիթորինգը</p>	<p>Հնարավոր վտանգներ</p>	<p>1) Ելակետային տվյալների ստացումը և հավաքագրումը</p> <p>2) ստացված տվյալների վերլուծությունը, ամփոփումը, կանխատեսումների կազմումը.</p> <p>3) տվյալների բազայի վարումը և տեղեկատվության տրամադրումը.</p> <p>4) մոնիթորինգի տվյալների հիման վրա անհրաժեշտ բնապահպանական գործողությունների իրականացման վերաբերյալ որոշումների նախագծերի մշակումը՝ շահագրգիռ կողմերի մասնակցության ապահովմամբ (տարածքային կառավարման մարմիններ, համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական կազմակերպություններ, բնօգտագործողներ և այլն):</p> <p>Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունների համար առաջարկվող մեղմացնող միջոցառումները ներառում են.</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատանքների ընթացքում բացառել տեխնիկատրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տեղամասերից դուրս: - Տեխնիկատրանսպորտային միջոցները վարել բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով, անհրաժեշտության դեպքում բարելավել այն: - Տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկատրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում: - Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին: - Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում հնարավորինս նվազեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:
--	--------------------------	--

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակարարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի վացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում - Շինարարական տեխնիկայի Տեխնիկական սպասարկման և 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու

	կայանման վայրերում տեղադրել ավագ կամ մանրախիճ: Վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում փոփած ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով: - Իրականացնել հողերի որակի մոնիթորինգ		
Հողային աշխատանքներ	- Հանված հողային զանգվածը օգտագործվում է տարածքում անհարթությունները հարթելու համար	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում
Վայրի բնություն, կենսամիջավայր, Կարմիր գրքում ընդգրկված էնդեմիկ տեսակներ	«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջների համապատասխան՝ բացառել բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը, ինչպես նաև անտառահատումները:	Շինհրապարակ և հարակից տերածքներ	Արտաքին զննում
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕП/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՃՀԱ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒԻ ԽԱՐԶ
ՏԱԵՐ ՀԱՄԱՅՆՔ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 43

18 նոյեմբեր 2022թ.

Օբյեկտ

Անասնազոմ և կթարան Մեկ հարկանի քարեպար շինություններ Անասնազոմ 84°16,1 կթարան 31,35°12,7, 4,69°6,15, 4,69°6,15 Ռիսկ. 3-րդ աստ.

(օբյեկտի անվանումը, կատեգորիա, վերակատեգորիա, ոլորտային, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն, հակված բնորոշումը, հղորդությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան))

Նախագծանախահաշվային փուլ

նախագծային փաստաթղթերի մշակման համար

(նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը

Տաշիր համայնք, գ. Բլազողարնոյե 1-ին փող. 2/3

(մարզի, համայնքի, վիճակի անվանումները, շենքի Ռամադո, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող

«Տաշիր Ագրո» ՓԲԸ, Ք. Տաշիր,

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային ուղեցրտ)

Առաջադրանքի տրամադրման հիմքը

Հայտ, սեփականության իրավունքի վկայական

(կառուցապատման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի վտնությունն իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է

Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում՝ դրան պատկանող և գործառական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը

8,8239

(հողամասի սահմանները՝ կողոպենաբաշխ նշանադրմամբ, մանրերևը (ՊԱ))

3. Հողամասի առկա վիճակը

Կիսաթեք ուելիեֆ

(ուելիեֆի քննարկումը, շենքերի (այդ թվում՝ քանդան նեղակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, վարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարենպարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները

Միջբնակավայրային

(ճանապարհների առկայությունը, նրկաթուղային տրանսպորտ մոտեցումները և այլն)

5. Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Քաղաքայում են

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

(գրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, կրաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

6. (*) Կից հողամասեր

Գյուղի ողեր

(կից հողագործողությունների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

Քաղաքայում են

(իջարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

Ըստ նորմերի

(տեղանքում գործող արտադրական, ապշտանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Պահպանել ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն և ՀՀ քաղաքաշինության նախարարի 263-Ն հրամանի պահանջները:

(եվլիդով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և երկրաբանության նախնական փաստաթղթերի պահանջները, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթները կամ դրանց քաղաքաշինության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի

12.5.թույլ հոսանքներ

12.6.աղբահանություն

13.Տարածքի ինժեներական նախապատրաստում

14.Բարեկարգում

15.Շինարարական նյութեր

16.Պաշտպանական կառույցներ

17.Հակահրդեհային պահանջներ

18.Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

19.Շրջակա միջավայրի պահպանում

20.Շինարարության կազմակերպում

21.Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22.Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը

ներկայացվող պահանջներ

23.Միջանկյալ համաձայնեցում

Ըստ նախագծի

(ռեզինի կազմակերպման, քրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

(անդամաբաժնի պլանավորման վերաբերյալ պահանջները, կանոնադատում, ճարտարապետական փոքր ծանր, քանկատարում, գոլազր և այլն)

Տեղական նշանակության, քար, ավազ, ցեմենտ, շինփայտ, ցինկապատ թիթեղ

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները, տանիքների, ճակարների լուծումների, արկաթե ղոների պատրուհանները վերաբերյալ)

(արվարձանի իրավունքներում մարդկանց և օլեկները/ պաշտպանության միջոցառումները)

Ըստ նախագծի

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

(չրջակա միջավայրը պահպանող ազդեցությունից բացառվող միջոցառումները)

Շինարարությունը կազմակերպել միահերթ, բացառել շինանյութերի պահեստավորումը ընդհանուր օգտագործման փարածքներում,

(առաջարկություններ շինարարության հնդր նապված անտարեսպաստ ազդեցության խցատման, քարաքայլին կնկնության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

18/11/2022-ից մինչև 27/12/2024-ը,

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

Ներկայացնել նախագծի փորձաքննություն:

(Հայաստանի Հանրապետության զոննորությանը տանառված փորձաքննության կնիակը կամ նախագծի ճրագրավորագրությունը՝ իրավաբանական համապատասխան իրավական անկողնի)

(իրավաստ մարմնի կամ Հայաստանի Հանրապետության զոննորությանը նախարարական դեպարտ շահագրգիռ)

մարմինների հետ էպիդեմիոլոգիայի նախագծի նախնական
համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման
հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով քախարհակա
ղեկարգում)

24. Հասարակական քննարկումներ

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված
ղեկարգում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական
եզրակացությունների ստացում

(նշվում են տվյալ օրենքի համաձայնեցման՝ օրենքով
սահմանված պահանջները՝ իրաւորմանների ու
քննարկման պահանջության և այլ լիազորված մարմինների հետ,
ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված
ղեկարգում՝ ինժեներական ենթակառուցվածքի
սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում


27. Այլ պայմաններ

Կ.Տ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Է. Արշակյան



Գլխավոր հատակագիծ



ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԿԱՅԱԿԱՆՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
 ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 9 սեպտեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՏԱՇԻՐ ԱԳՐՈՆ» ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Տաշիր գյուղ Բլազդարնոյե 1-ին փողոց 2/3 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 21102020-06-0030,, Համայնքի ավագանու որոշում թիվ 100-Ա, 25/12/2020թ.

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 06-024-0101-0093

Մակերեսի չափը (հա)՝ 8,8239

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 09092021-06-0048, գաղտնաբառ՝ ACLBDMXDDRBM

Փաստաթղթի իմրությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Հայկուհի Պապիկյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 09092021-06-0048, գաղտնաբառ՝ ACLBDMXDDRBM

Փաստաթղթի խնամքումը և վավերականությունը կառույ է պտուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՔ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 18 նոյեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՏԱՇԻՐ ԱԳՐՈ» ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Տաշիր գյուղ Բլազդարնոյե 1-ին փողոց 2/4 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ

Համայնքի ղեկավարի 17.11.2021թ թիվ 631-Ա որոշում, Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 30062021-06-0039 վկայական, Հայանքի ավագանու 14.10.2021թ թիվ 79-Ա որոշումից քաղվածք

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 06-024-0101-0099

Մակերեսի չափը (հա)՝ 1.648487

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 18112021-06-0022, գաղտնաբառ՝ XVLFAYYU1UDK

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Սուրեն Սարգսյան
 Ձբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 18112021-06-0022, գաղտնաբառ՝ XYLFAYYU1UDK

Փաստաթղթի խնդրությունը և վավերականությունը կարող է ստուգվել կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով



Կադաստրի
Կոմիտե